



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը


You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material


206

17-66



92

70



Ն. Ա. ԴՕՐՐՈԼԻԻԲՈՎ

ԱՂԷՔՍԱՆԴՐ

ԳԱՎԱՑՑԻ

ՔԱՅԱՆԱՆ ԵՒ ԻՐ

ՔԱՐՈԶՆԵՐԸ

123

Գրք. Գրադ. քան.
ՄԿՐՏՈՒՄԵԱՆՑ

206
7-66

Ս. ՊԵՏԵՐՈՍՅԱՆ
ԳՈՒՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ ՏՊԱՐԱՆ
1902

36707-62..

20	Արժեքներ	
2-66	գումարներ	
4 11 1902թ.		
211-3285	22/3207	



206
7-66

23 SEP 2009
7-56

Ն. Ա. ԿՕՐՐՕԼԻԻՐՈՎ:

ԱՂԵՔՍԱՆԴՐ ԳԱՎԱՑՑԻ ՔԱՂԱՆԱՆ

եւ

ԻՐ ՔԱՐՈՁՆԵՐԸ



ԹԱՐԳՄԱՆԵՑ ԳԵՈՐԳ ԲԱԼ. ԽԿՐՏՈՒՄԵՆԵՑ



Ս.-ՊԵՏԵՐԲՈՒՐԳ,
«ՊԻՇԿԻՆԵԱՆ ԱՐԱԳԱՏԻՊ» ՏՊԱՆԱՆ
1902

Дозволено цензурою. С.-Петербургъ, 21 Января 1902 года.

36707-62

„Пушкинская Скоропечатня“, Лештуковъ 4.



1860 թւի Սեպտեմբերի 14 Կէսին
Եւրոպական լրագիրները շատ խօսացին
արաստօվոր քարոզիչ Գալպացու մո-
սին, որ Նէպոլում զրգում էր ժո-
ղովրդին զլնատել Կարոլոս Գ-ի և
Փերդինանդ Ա-ի արձանները և նրանց իրանների
վրա զետեղել Գարիբալդու և Վիկտոր Էմմանուէլի
զուխները:

Կրագիրների մեծ մասը ծաղրում էր նրան, մի
քանիսն էլ յիշատակում էին նրա մասին առանց
ծաղրի. բայց, ամենափոքր բացառութեամբ, բոլորը
նրան ճանաչում էին միմիայն արձանների մասին ար-
տայայտած իր օրիգինալ մտքերի պատճառով: Նրա
մասին եղած վերջին յիշատակութիւնը համարեա
բամբասանք էր մի ինչ որ «լորտանդանական լրա-
գիրներից մէկի թղթակցի կողմից, իբրև թէ, Գա-

վաղցին Նէապօլում բողոքականութիւն քարոզելիս պարտաւորեցաւ իր ունկնդիրներէց վախուսատալ, որովհետեւ նրան սկսեցին քարկոծել: Եթէ մի այդպիսի դէպք անգամ տեղի է ունեցել, 'ի հարկէ այդ ոչ մի անպատուութիւն չէ Գալացցու համար, քանի որ յայտնի է, թէ ինչպիսի միջոցների դիմելու ընդունակ են Նէապօլիտանեան մոլեռանդները: Բայց բանը նրանումն է, որ այդ լուրը, անկասկած՝ մեծացրած ու յեղաշրջած է, որովհետեւ Գալացցին չի մտածել անգամ բողոքականութիւն քարոզել և ընդհանրապէս անընդունակ էր իր ճառերը աղանդային սխոլաստիկային նւիրել: Նա խօսում էր պապի մարմնաւոր իշխանութեան դէմ, ժողովրդի՝ ծէսերի հետ չափազանց կապած լինելու դէմ, հոգեւորականների 'ի չարը գործելու դէմ, բայց այդ բոլորը, ինչպէս կտեսնենք, միանգամայն անկախ էր որեւէ բողոքական հայեացքներից, այլ միայն առողջ մտքի ազգամար էր և ի սէր ժողովրդի: Եւ ժողովուրդը օրիգինալ քարոզչի տաղանդն ու ջանքը կարողացաւ գնահատել: Նրա քարոզների արդիւնքն այն եղաւ, որ նրա հետ անկարող է հաւասարել մինչև անգամ մօնախնեօր Դիւպանլուն, որ ինչպէս յայտնի է, այժմ իւր անձի մէջ ամփոփում է Ֆենելոնների, Բոսիւէտների, Ֆլէշլէի և Փրանսիական եկեղեցու և պարատի միւս հոչակաւոր հռետորների ամբողջ ճարտարախօսութիւնը:

Ամիսներ առաջ Գալացցու մի քանի քարոզները վիմատիպ լոյս տեսան: Իրանք թէ իրանց տեսակով, թէ ներքին արժանաւորութիւններով մեզ երևա-

ցին, որ արժանի են ոռոս հասարակութեան մի որոշ մասի ուշադրութեան, ուստի վճռեցինք դրանցից զխաւորները վերլուծել և մի քանի կտոր թարգմանաբար առաջ բերել: Բայց նախ՝ մի քանի խօսք կատենք Գալացցու անձնաւորութեան և նրա քարոզչական գործունէութեան արտաքին հանգամանքների մասին:

Իտալական շարժումներին հետևող մարդկանց Գալացցին վաղուց յայտնի է: Նա մինչև անգամ մասնակցում էր 1848 և 1849 թւականների միջնադէպերին: Նախ քան այդ ժամանակները, նա իտալական շատ հայրենասէրների նման թափառում էր զանազան տեղեր, անդորրութեան ձգտելով Բոլոնիայում, որին պատկանում էր իր վանական աստիճանով: 1848 ին նրան տեսնում ենք Վենետիկում ժողովրդին աւսորիացիների դէմ պատերազմի ոգեւորելիս: Կարճ միջոցում նրա ժողովրդականութիւնը մեծ ծաւալ ստացաւ: Իբրև սպայոյց՝ կարելի է հետևեալ դէպքը բերել: 1848 թւին Ֆերդինանդ II ը գաւաւ, որ իր արածը արդէն բաւական ազատամտութիւն է, ուստի հրաման արձակեց իր զօրքին վերադառնալ, որոնց իբրև թէ ուղարկել էր աւսորիացիների դէմ: Պէպէ զօրապետը չկամեցաւ հպատակել այդ հրամանին, բայց հպիւ կարողացաւ իր մօտ պահել երկու թէ երեք զունդ, մնացեալ զօրքը վճռեց Ստատելլա զօրապետի հետ վերադառնալ: Գալացցին այդ ժամանակ Տրիվիզօումն էր, ինչպէս իմացաւ դրանց յետ նահանջելը, իսկոյն ընկաւ Նէապօլցիների ետևից: չէնց այն ըոպէին հասաւ նը-

րանց, երբ զօրքը ուզում էր զլիաւոր հանդիստը առնել, իսկոյն կրակոտ կրօնաւորը վազեց զօրապետի մօտ, համոզելու վերագառնալ և առաջ մղել իր՝ 15000 մարդուց բաղկացած բանակը Իտալիայի ազատութիւնը պաշտպանելու համար: Բայց Ստատեյլան և նրա օգնականները ժամանակ չաւին Գալացցուն իր միտքը արծարծելու. հաղիւ նա յայտնել էր, զինւորներին հրաման արեցաւ անյապաղ պատրաստել և ճանապարհ ընկնել: Զօրապետները վախում էին, որ Գալացցին իսկապէս կգրուէր զօրքին, եթէ ժամանակ տային նրան լրսելու...: Երևի Ստատեյլան և նրա օգնականները այնքան չէին յարգում քարոզչի հռետորական տաղանդը, որքան նրա ժողովրդականութիւնը, որ զօրեղ հեղինակութիւն էր ապա իր Գալացցուն տիրապետելու զօրքի գիտակցութիւնը...: Բայց ինչ որ էլ լինէր, 15000 մարդ իրանց իշխանութեան զրդմամբ թողին իրանց հանդատատեղին և արագ քայլերով խոյս առին վտանգաւոր վանականից:

Վենետիկ վերագառնալով, Գալացցին շարունակեց ժողովրդին ամենալճաական կերպով համոզել: Երբեմն նա այնտեղ արմատական կուսակցութեան օրգան էր, որ կազմակերպւած էր «Ժողովրդական ակումբ» անունով, բայց չափաւոր մարդիկ, որոնք զեռ գաձեալ յոյս ունէին օրինական միջոցներով օգտուել՝ դոսան, որ Գալացցու քարոզները չափից դուրս յանդուզն են և «բարեկարգութեան կամիտեա» ը ոչ միայն արգելեց նրան քարոզել, այլ մինչև անգամ խնդրեց հեռանալ Վենետիկից: Այդ

արդէն 1848 թւի վերջն էր: Գալացցին հեռացաւ և շատ վշտալի նամակ գրեց Մանինին: Մանինը պատասխանեց, որ շատ ցաւում է բոլոր պատահածների մասին, բայց հայր Գալացցին պարտաւորւած էր զոհել առ ժամանակ իր համոզմունքները և ձգտումները, որպէս զի հայրենասէրների հասարակութեան մէջ տարաձայնութիւն ձգած չլինէր մի այնպիսի ժամանակ, երբ ընդհանուր միութիւնը ամենակարեւորն էր օտարերկրացի թշնամու դէմ պաշտպանելու համար: «Բայց և այնպէս — վերջացում էր Մանինը — ապագային ինչ տեսակ էլ որ լինի Ձեր արամադրութիւնը դէպի ինձ, ես երբեք չեմ դադարի յանձին Ձեր յարգել Ձեզ, որպէս Իտալական ազատութեան և անկախութեան ամենաեռանդուն առաքեալներից մէկին»:

Մինչդեռ Վենետիկը անոյոս կռիւների սարսափում թուլանում էր, հռովմում յաղթանակում էր հայրենասէրների կուսակցութիւնը. Գալացցին սլացաւ այնտեղ: Ցաւում ենք, որ տեղեկութիւն չունինք նրա հռովմում ցոյց տւած գործունէութեան մասին, միայն գիտենք, որ նա Ուզո Բասսիոսի անբաժան ընկերն էր և համարում էր այն սակաւաթիւ անձերից մէկը, որոնք հետեւեցին Գարիբալդուն նրա հռչակաւոր նահանջի ժամանակ և ազատեցան աւստրիացիների ձեռքից: Գալացցին միջոց ունեցաւ Անդլիա ևս հասնել և «անկախ» քարոզիչ Գինդոնի գործակցութեան շնորհիւ կարողացաւ այնտեղ շարունակել իր հռետորական գործուէրութիւնը: Այդ ժամանակ նրա վարդապետութեան

և հռովմէական եկեղեցւոյ սովորական հայեացքերի մէջ իսկապէս նկատելի եղան մի քանի զանազանութիւններ. նա աւելի աստուածաշնչի կողմն էր, քան կաթողիկական աւանդութիւնների կողմը և այդ զբր-ւածքի հոգին բացատրում էր աւելի ժողովրդի՝ քան հռովմէական հոգեւորականութեան օգտին: Իրա համար մի քանի անգամ ենթարկւեց զլիաւորապէս իրլանդացի մոլեռազների վերաւորական ցոյցերին: Վերջը, չգիտենք այդ ընդդիմութիւնների պատճառով, թէ իւր ցանկութեամբ, նա հեռացաւ Ս. մերիկա, ուր և երկար ժամանակ քարոզում էր: Նա այնտեղ էլ յաճախ հանդիպեց արտունջների, խրատութիւնների, սուլոյների և սպառնալիքների, բայց նա շարունակում էր իր գործը և նրան համակիր մտերիմների բազմութիւնը միշտ ուժեղ էր, քան անբաւականների կուսակցութիւնը:

1860 թւին Գալացցուն տեսնում ենք Պալերմոսում, Մեսսինայում, Նէապոլում Գարիբալդուց և նրա կամաւորներից անբաժան: Հարկ եղածին պէս նա մասնակցում է ճակատամարտներին, նա ողբերում է կուռղներին պատերազմում: նա զիմում է ժողովրդին խօսքով, երբ հայրենասէրները մոռաք են գործում քաղաք: Սյդպէս նա մի քանի ժամանակ համոզում էր և արթնացնում ժողովրդին Պալերմոսում և Մեսսինայում ու այդպէս նա ժողովրդի նոր պահանջների և պարտաւորութիւնների ուսուցող անդիսացաւ Նէապոլում:

Բոլոր ժամանակ, քանի որ Գարիբալդին Նէապոլումն էր, Գալացցու գործունէութիւնը շարունա-

կոււմ էր այնտեղ, իսկ այնուհետեւ ոչինչ չէր լսում նրա մասին և շատ հաւանական է, որ անյարմար լինէր նրա համար մնալ և ուսուցանել ժողովրդին Նէապոլում, քանի որ մինչև անգամ «Գարիբալդեան օրհներգ»ը արգելւած մի բան էր դարձել և ցոյց էր համարւում ընդդէմ տէրութեան: *)

Վերջերը Գալացցին աւելի գրական աշխատանքով էր պարապում: Երկու ամիս առաջ լոյս տեսաւ նրա մի նոր հեղինակութիւնը պապի մարմնաւոր իշխանութեան դէմ—Roma tutta dell Italia.

Իստանալով Գալացցու քարոզներին, կասենք, որ խօսքի միջոցով արտայայտած դատողութիւնների շրջանում, դժւար է նոր կառավարութիւն հաստատելու մասին մի այլ օգտակար բան գտնել, քան նրա քարոզները, եթէ միայն այդ կառավարութիւնը կարողանար լաւ հասկանալ իր իսկական պարտականութիւնները և յարաբերութիւնները դէպի ժողո-

*) Բայց և այնպէս մենք կարգացինք մի ամառը թղթակցութեան մէջ, որ Գալացցին Նննդեան ժողովրդական հանդէսներին Նէապոլումն է եղել, որի ընթացքում Մագոնայի պատկերը՝ զարդարած է եղել ազգային դոյներով, մանուկ Յիսուսը—Գարիբալդեան կարմիր շապիկով, Յովսէփի բեխերը՝ à la V ի կողո՛ր Լամանուէլ մոդերը կրելիս են եղել զնդապետ Բեկսիոյի զարդարանքները. Վրանչիսկո II-ը ներկայացնելիս է եղել Հերովդէսին: Թղթակիցը (շատ լրջամիտ) ի հարկէ սարսափով է նկատում, որ այդպիսով յեղափոխութիւնը Նէապոլում թափանցել է մինչև անգամ ամենասուրբ իրերի մէջ և ի հարկէ այդ բանում նկատում է Գալացցու և միւս («Գարիբալդեան խառնուրդ») ի զօրեղ մասնակցութիւնը:

վուրդը: Գավազցին երբէք՝ մի խօսք անգամ չէ շեղ-
ւել «Իտալիա և Վիկտոր Էմմանուէլ» Գարիբալդիա-
կան ծրագրից: Նա ծառայում էր ժողովուրդի ցան-
կուծիւնների և նոր կառավարութեան պահանջների
իբրև ամենալաւ միջնորդ: Նա իր ազդեցութեամբ
կարողացաւ չափից դուրս շատ բան անել հարա-
ւային Իտալիայում իրերի նոր կարգերը ժողովուրդա-
կանացնելու գործում: Գավազցու քարոզների վեր-
լուծումը մեզ ցոյց կապ նրա ձգտումների և պա-
հանջների էութիւնը. իսկ նրա ազդեցութեան, ոյ-
ժի ապացոյց են նրա քարոզների ընդունելիւ
ստացումը:

Գավազցին քրիստոնէութեան առաջին քարո-
զիչների նման չէր դժւարանում քարոզելու տեղը
ընտրել — տաճար, փողոց, հրապարակ, մինչև ան-
գամ թատրոն և ամեն տեղ, ուր միայն ունկնդիր-
ների խումբ կար՝ նա յարմար և բարեյաջող էր հա-
մարում: Նէապօլում նրա սիրած տեղն էր Zargo dell
Palazzo, որը գտնուում էր San Francesco di Paolo
եկեղեցու հանդէպ և ի տես պալատի, Կարօլոս IIIի
և Ֆիրզինանդ Iի արձանների, որոնց դէմ արած ցոյ-
ցը քարոզչի անունը հռչակելուն շատ անսպասելի
կերպով ծառայեց: Նրա քարոզների մասին նախապէս
ծանուցւում էին և միշտ մեծ ամբօխ էր ժողովուրդ
լսելու: Ծափահարութիւնները, աղաղակները - բրա-
ւօ, այո՛, ո՛չ, Viva Italia! Viva Garibaldi! ևն. ևն.
ստէպ ընդհատում էին քարոզչին: Երբեմն նա իր
քարոզին կարծես խօսակցական բնաւորութիւն էր տա-
լիս, երբեմն խօսքերի տեղ՝ արտայայտող միմիկա էր

գործածում և ժողովում ընդհանուր բերկրանք էր յա-
րուցանում: Սյդ բոլորը խիստ հակառակ է այն մրա-
քին, թէ ի՞նչպէս ենք հասկանում քարոզ խօսքը, այ-
սինքն՝ խօսք, որով հոգևոր անձը դիմում է աշխար-
հականներին: Բայց նրանց, որոնց դուր չի դայ «հո-
գևոր ամբիոնի մի այսպիսի սրբապղծութիւնը», այս-
տեղ կնկատենք, որ Իտալիայում և մանաւանդ Նէ-
ապօլում սոյն բնաւորութեամբ քարոզները ոչ թէ
միայն ընդհանրապէս անսովոր չեն թւում, այլ տի-
րապետող դեր են կատարում: Մի քանի խօսք այդ
մասին յետոյ կասենք, իսկ այժմ միայն նախազգու-
շայնում ենք, որ Գավազցու քարոզների արտաքին
ձևը, որքան էլ մեզ համար արտասովոր լինի, այդ
բանը բացառապէս միայն նրան չպէտք է վերաբերենք:
Գավազցու քարոզները իր հայրենիքի միւս քարո-
զիչների քարոզներից զանազանոււմ են գլխաւորա-
րապէս բովանդակութեամբ և բովանդակութեան
էութիւնն էլ այն էր, որ ամեն տեղին և ամեն ժա-
մանակին յարմար էր, միայն թէ ունկնդիրներ լինէին:
Երբ վառ եղանակի պատճառով ժողովուրդի համար
անյարմար էր լինում հաւաքւել բաց երկնքի տակ,
Գավազցին եկեղեցի էր մտնում: Սյդպէս նա իր մի
քանի քարոզները ասել է del Carmine եկեղեցում:
Երբ հարկ էր լինում խօսք ասել այնպիսի մարդոց
ներկայութեամբ, որոնք Zargo-del Palazzo չէին
դալիս, Գավազցին ինքն էր գնում այնտեղ, ուր կա-
րելի էր նրանց դուարւած գտնել: Սյդպէս նա գը-
նաց piazza Mercatello, համոզելու baraccani նե-
րին, լայցարոններին, որոնք Նէապօլի ամենաբազմա-

մարդ քաղաքամասն էին կազմում և Բուրբոններից հեռանալու գործում ամենից աւելի երկար էին տատանուում: Երբ ժողովուրդը հաւաքուում էր մի որևէ տեսարանի ներկայ լինելու, Գավաղցին մտնում էր այնտեղ խօսելու. այդպէս նա շատ անգամ քարոզել է նաև թատրոնում:

Մի անգամ Սան-Կարլօի թատրոնում մի ինչ որ բալէտ էին խաղում: Առաջին գործողութիւնը վերջացել էր, երբ յանկարծ օթեակներից մէկում յայտնւեցաւ մի յաղթանդամ, զեր վանական կարմրագոյն միրուքով, կէս զինուորի և կէս վանականի հագուստով — դա Գավաղցին էր: Նա ինչ որ մի լուր հաղորդեց Գարիբալդիականների մասին և ժողոված հասարակութեան հետ սկսեց խօսել Իտալիայի, նրա պահանջների և իւրաքանչիւրի պարտականութեան մասին դէպի հայրենիքը և այլն: Բոլորը սկսան լսել նրան, մինչև անգամ կաքաւոյները և դերասանները խնդրեցին բարձրացնել վարագոյրը, խմբւելով բեմի եզրում, լսելու ինքաքրքիր քարոզը:

Մի այլ անգամ Գավաղցին յայտնւեցաւ Նէպոլի Փրանսիական թատրոնում: Նա հէնց նոր վերագանուում էր Կապուայի մօտ կռուող զօրքերի շարքից: Լօրկի տակից կարմիր շապիկը, վանականի վերջարի տեղ («կեպի») ն, կողքին սուր, ատրճանակը դօտկուով, այդ բոլորը մի արտակարգ բան չէր այն ժամանակ Նէպոլում: Բայց Գավաղցու երևալը թատրոնում ընդհանուր ուշադրութիւն գրաւեց նրա համար, որ հէնց ուղղակի կռւի դաշտիցն էր դալիս: Սյդպէս՝ հաղիւ էր վերջացել այդ գիշերը արևող

Սկրիբի ու Լիգուէի «Bataille de dames» պիեսի առաջին գործողութիւնը, որ Գավաղցին վերադարձաւ իր օթեակում և քարոզչի հնչող, համարձակ, գրաւիչ խօսքը այնուհետև փոխարինեց դերասանների գեկլամացիային: Խօսում էր նա Կապուայի ճակատամարտների մասին, Գարիբալդու գործողութիւնների և մտադրութիւնների մասին, զօրքի դրութեան, հայրենիքի և ազատութեան մասին: Երկար էր խօսում և Նէպոլի անտարբեր հասարակութիւնը այն աստիճան համբերութեամբ, ազահօրէն և յափշտակեած էր լսում նրան, որ պիեսսան անգամ մոռացւեցաւ...: Երբ Գավաղցին վերջացրեց, իմպրեսսարիօն (թատրոնի կառավարիչ) բեմ դուրս եկաւ և առաջարկեց հասարակութեանը — որովհետև կոմեդիան վերջացնելու համար փոքր ժամանակ է մնում, արդեօք, հասարակութիւնը չէր ցանկանայ այս անգամ խաղին փոխարինել Գարիբալդեան օրհներգը: Լսւեցան խլացնող ծափահարութիւններ և eviva! Երգւեցաւ օրհներգը, որի ժամանակ հասարակութիւնը իր յափշտակեած ոգևորութիւնն էր արտայայտում:

Եւ այդ ոգևորութիւնը միայն ապարդիւն ազաւանքներով չվերջացաւ: Գավաղցին զիտէր ոգևորել և այդ ոգևորութիւնից օգուտ քաղել... ահա՛ քարոզչի («կեպի») ն պտուէց թատրոնում և հասաւ իրան զօրքի օգտին լի նւէրներով: Բացի այդ՝ նրկարագրելով զօրքի դրութիւնը, նա ասաց, որ վերաւորաւսները զգաթի (корпия) կարիք ունեն և այդ

մասին խնդրով դիմեց կանանց: Միև առաւօտը նրա մօտ զգաթի ամբողջ դէզեր էին բերւած:

Նրա քարոզները այդպիսի յաջող հեռւանքներ շատ ստէպ էին ունենում: Մի անգամ՝ երբ հրապարակում վերջացրեց իր յորդորը, դէպի նրա ամբիոն անյապաղ սլացան թաշկինակներ և ամեն տեսակի սպիտակեղէններով լի կապոյներ, նրա «Կէպին» շատ յաճախ էր լցում դրամներով Իտալիայի ազատութեան համար կուռղ կամաւորների օգտին:

Գավազցին այն ութ թէ տասն անձանց թրւումն էր, որոնք սեպտեմբերի 7-ին Գարիբալդու հետ Նէապօլ մտան: Գալուն պէս, Գարիբալդին դրնաց իսկոյն սուրբ Ջիննարօի մայր եկեղեցին, բայց ոչ թէ ըստ ցանկութեան «Times»-ի վերջնելու և քիմիական վերլուծման ենթարկելու «սուրբ Ջիննարօի նշանաւոր արիւնը», որ այդ եկեղեցումն էր պահւում, այլ ուղղակի դնաց Աստուծուն հանդիսաւոր զոհութիւն մատուցանելու Նէապօլի ազատութեան համար: Գարիբալդին՝ ժողովրդի որդին և բարեկամը չէր կարող ժողովրդի հաւատալիքները անպատել և ամենից առաջ ուզեց ցոյց տալ, որ ինքը ամենեւին սատանայից չէ ուղարկւած և ոչ էլ սուտ քրիստոսի յառաջընթաց կարողեան է, ինչպէս փորձում էին Գարիբալդուն ներկայացնել հոօվմի և Բուրբոնների բարեկամ արբաններն ու կրօնաւորները: Բայց երբ Գարիբալդին մօտեցաւ եկեղեցուն, դուռը փակ դուռաւ: Դեռ այդ փոքր էր. մոռտքը խափանւած էր արդեւներով, իսկ եկեղեցու միաբան հոգեւորականութիւնը եպիսկոպոսի հետ միասին փախուստ էր աւել:

Այն ժամանակ հայր Գավազցին այստեղ ամբողջ հոգեւորականութեան ներկայացուցիչ հանդիսացաւ — մոռտքը բացւած էր ժողովրդի և ազգային հեծելազնդի օգնութեամբ և նա կատարեց ասուածային արարողութիւնը ու եկեղեցում ողջունեց Իտալիայի ազատութիւնը: Ամբօխը չափից դուրս զոհ մնաց:

Սրանից յետ՝ Գավազցին ներկայանում է մեզ Իտալական ազատութեան և միութեան մի անխոնջ միսիօնար: Սկսած Սեպտեմբերի 12 ից, մինչև այդ ամսի վերջը և հոկտեմբերի կէսից էլ աւելին, նա համարեա ամեն օր և ամեն յարմար դէպքում երկար խօսք էր ասում ժողովրդին: Անկարելի էր շարադրել այդ քարոզները. նա յանպատրաստից էր խօսում: Այդ ի նկատի առնելով, պէտք է խօստովանել, որ Գավազցին շատ նշանաւոր ճարտասան է: Ուղիղ է, նա երբեմն շեղւում է իր գլխաւոր առարկայից, կրկնութիւններ է անում, չէ լրացնում կամ աւելորդ ձգձգում է, նրա ամեն քարոզի մէջ մտքերի անկապութիւն և թռիչքներ շատ են աչքի ընկնում, որ ներելի չէ խոր մտածւած քարոզներին, բայց և այնպէս՝ նրա, մինչև անգամ տպադրւած քարոզի մէջ դուք կենդանի խօքի հետք էք տեսնում, կարծես մարդու ձայն էք լսում, որ խօսում է ձեզ հետ և ոչ թէ փայտի ձայնով կարդում է նախօրօք պատրաստած տետրակը: Սրանից անկախ — Գավազցու քարոզների մէջ զործերի դրութեան մասին լուսաւոր հայեացքներ և այդ զործերին ընդհանուր բարոյականութեան պահանջներ յարմարեցնելու հմտու-

Թիւն, որոնք ամեն քաղաքացու պարտականութիւններն են կազմում:


Գովաքցու քարոզների մէջ շատ բան խիստ էր, մինչև անգամ յանդուզն, բայց չմոռանանք, որ նա խօսում էր ազատութեան առաջին օրերում և մի ժողովրդի հետ, որ նոր էր սթափուում այդքան տարիներ ճնշող խաւար բռնակալութիւնից: Միևնոյն ժամանակ պէտք է նկատել, որ չնայելով մի քանի չափազանց համարձակ բանաձևերին՝ Բուրբոնների, Աւստրիայի, Պապի և հերցոգների մասին, Գովաքցին իր քարոզների մէջ ամենևին այնպիսի կատաղի պարմիստ չէ ներկայանում, որպէս կամենում էին նրան ներկայացնել մի քանի կղերական ամսագրեր:

Ընդհակառակն՝ նա ունի ներման և խաղաղութեան խօսքեր, նա համոզում է ժողովրդին խաղաղ մնալ և խելամուռել, բայց և այնպէս լու և որ դառնանք նոյն իսկ նրա քարոզներին:

Սեպտեմբերի 12-ին Գովաքցին յայտնեց San Francesco di Paolo հրապարակում: Բազմաթիւ ամբօխը արդէն սպասում էր նրան և դիմաւորեց բուն ծափահարութիւններով: Գովաքցին մի փոքր ժամանակ լուռ կանգնեց, արհմարհական հայեացք ձգեց հրապարակում կառուցած պալատի արձանների վրա, յետոյ՝ իր հնչող և ուժեղ ձայնով կարգաց եկեղեցու սիւնազարդ մասի վրայի հետեւալ արձանադրութիւնը «D. O. M. Francesco di Paolo Ferdinandus I. ex. voto A. D. mdcccxvi» և այդ էլ նրա քարոզի բնութանը եղաւ: Նա սկսեց.

Սյդ արձանադրութիւնը, այդ արձանները, այդ պալատը, այդ բոլորը ինձ ծառում են Բուրբոնների մասին. ո՛ր էն նոքա՝ մեր Բուրբոնները: Ի՞նչ պատահեց այդ գոռոզ ցեղին, որոնք որդէցորդի արժանաւորապէս ժառանգում էին մահանունը: Նոցա յիշատակներով լի է այս հրապարակը, որ թէև անյարմար է ունկնդրութեան համար, բայց ես դիտմամբ ընտրեցի այս տեղը հէնց նրա համար, որ հրապարակը՝ ինքը բարձրաձայն խօսում է Բուրբոնների մասին: Ո՛ր էն, ո՛ր այդ իշխողները: Նրանք բարձրանում էին... բաւական էր մի անգամ փչել... մի անգամ միայն... և նրանք գահաւէժ եղան (ծափահարութիւններ). նրանք ընդ միշտ ընկան... այլ ևս այդ անիծեալ ցեղը երբէք չի թագաւորի...

«Եւրոպայի բոլոր բռնակալներից ամենախղճալի ցեղը — այդ Բուրբոնների ցեղն է: Բուրբոնների ամբողջ ցեղից ամենաանպէտք սերունդը — Իսպանականն է և Իսպանական սերնդի ամենափթած ծիւղը — այդ Նէպօլիտանեան Բուրբոններն են: Անկցին Բուրբոնները (բոլոր ամբօխը աղմկած գոչում է — բբաւօ՝ անկցին Բուրբոնները): Սյս անգամ նոքա խալառ մեղ թողին (բերկրանք ամբօխի մէջ): Սյլ ևս այսուհետև նրանց համար Վեննոյի, Վերոնայի տրակտատներ չկան և ոչ հաւատադրութիւնը, ոչ ներումը կարող կլինեն նրանց Նէպօլ վերադարձել... Ժողովուրդը և ժողովրդի հերոսը վանդեցին Բուրբոններին. Անկցին ուրեմն Բուրբոնները (ամբօխը՝ ինչպէս մի անձնաւորութիւն, մի քանի անգամ աղաղակում է. անկցի, անկցի, հեռօւ Բուրբոնները) ... Մենք սկսեցինք գործը»



մենք էլ կվերջացնենք... բայց որպէսզի գործը վերջացնենք, հարկաւոր է մի քանի բան անել...

«Գործը լրացրած լինելու համար ես հարկ չեմ համարում այդ տոհմի յիշատակը ոճնչացնել մինչև անգամ նրա արձանների մէջ և մեր վրէժը այդ արձաններից առնել: Սիցիլիայում, ուր այդ արձանները ոչ մի արտիստիքական արժէք չունէին, իհարկէ Սիցիլացիները շատ լաւ արեցին, որ նրանցից ոչ մէկը չթողին իրանց պատւանդանների վրա (ամբոխի մէջ հաւանութեան աղաղակներ)... Բայց չցանկանալով XIX-րդ դարու վանդախներ լինել, մենք խնայենք այս արձանները, յարգելով այն միտքը, որ դոքա մեր մեծ արձանագործ Կանովայի ստեղծագործութիւններն են: Սհա՛ այս, (ցոյց տալով Կարոլոս III-ի արձանը) ներկայացնում է մի անպէտք մարդ, այն ինչ՝ շատ կարելի է, դա գուցէ պատահմամբ մի քանի լաւ բան է արել Նէպոլի համար, որը մանուկ հասակում թողնելով ահա՛ այդ գարշելի արարածին (ցոյց տալով Փերդինանդ I-ի արձանը), ասում են, ասել է իր նախարարներին. «Նա այն կլինի, ինչ որ դուք նրանից կպատրաստէք»: Վերջինին արձանը եթէ միայն Կանովան կերտած չլինէր, ես կկամենայի փոշի դարձնել, որովհետև անցեալ դարում Նէպոլիտական ամենաչար տանջողն էր: Ասել, որ մարդը կարողացաւ այնպիսի քաղաքացիների կախաղան հանել, որպիսիք էին՝ Կարաչոլո, Մարիո, Պագանո և Չիրիլո, նշանակում է ասել, որ այդ մարդը հարիւրաւոր կախաղանների է արժանի և նրա արձանը հարիւրաւոր անպատու-

թիւնների (երկար ծափահարութիւններ)... բայց թող արձանը ևս մնայ ի յարգանս Անտոնիո Կանովայի:

«Բայց հին հռովմայեցիները վանդախներ չլինելով հանդերձ, մեզ լաւ օրինակ են թողել—նրանք կամենալով խնայել այն արձանների ճարտարագործութիւնը, որոնք պատկերացնում էին Ներոնին, Կալիգոլային, Էլիոնաբալին, նրանք այդ արձանները զլխատեցին և այդ հրէշների իրանների վրայ այլ գլուխներ դրեցին: Աստուած իմ, (Գովագցին լուռում է մի փոքր ժամանակ կանգնած է անշարժ, ձեռները կրծքին խաչած)... եթէ հեռացնենք այս արձանների գլխները, չէ՞ որ դրանով Կանովայի ստեղծագործութիւնը չի ոճնչանայ: Եւ եթէ ատելի տիրանների դէմքը պատկերացնող այդ երկու գլուխի աեղ, որոնք հերոսներն են ներկայացնում, թէև նրանց դէմքին բոլորովին այդ չէ սազում, ի՞նչ կլինէր, եթէ դրանց ուսերի վրայ ազնիւ մարդոց (galantuoma)—Վիկտոր Էմմանուէլ թագաւորի և յեղափոխութեան ու մեր աղատութեան հերոս՝ Յովսէփ Գարիբալու գլուխները դնէինք (խլացնող ծափահարութիւններ): Ի՞նչ աւելի լաւ դեղեցկութիւն կարելի է տալ այս հրապարակին, որ այսուհետև Իտալական ազգայնութեան հրապարակ պիտի կոչւի...

«Պարոններ, Իտալական ազգութիւնը վերածնում է, բայց դեռ ոչ բոլորովին: Ես զիտեմ, ով լաւ է սկսել՝ նա գործի կէսը արդէն արել է. բայց և նոյնպէս յիշում եմ մեր աստուածային Ուսուց-

չի խօսքը — ով որ ձեռք դնում է գութանի վրա և յետ է նայում ու ընդհատում է գործը, նա արժանի չէ աստուածային արքայութեանը... Ինչ նշանակութիւն ունի մեզ համար, եթէ մենք կբաւականանք Սիցիլիայի և Նէապօլի ազատելովը և չենք մտածի Ֆնացեալ Իտալիայի մասին, որ դեռ ստրկութեան մէջ է, այն ժամանակ թէ՛ Նէապօլը և թէ՛ Սիցիլիան նորից ստրկութեան մէջ կընկնեն... Պէտք է վերջ դնել պէտք է վերջացնել Իտալիայի վերածնութեան գործը: Ալպերից սկսած մինչև Լիւրէէյ, Սիցիլիայից մինչև Տրիդենտ մենք պիտի մի ընտանիք կազմենք կամ ոչինչ...» (սաստիկ ծափահարութիւն) *):

Վերլուծելով Գալացցու առաջին քարոզի էական մասը, գտնում ենք, որ նա արտաքոյ կարգի և գործնականապէս խօսել զիտէր հէնց այն բանի մասին, ինչ որ հարկաւոր է, և այնպէս, ինչպէս ժամանակին և հանգամանքներին յարմար է: Ազա-

*) Մենք զիտմամբ մէջ բերեցինք Գալացցու առաջին քարոզի սկիզբը, որպէս զի ցոյց տանք, թէ ինչ տեղ էր բռնում նրա քարոզի մէջ արձանների դէմ արած ցոյցը. ինչպէս տեսնում ենք, այդ ցոյցը ճառի էական մասի հետ ոչինչ կապ չունի և այդ ներածութեան մէջ աւելի մի է պիտոյ է, ուրիշ ոչինչ: Ինչպէս երևում է, ինքը՝ քարոզիչը մեծ նշանակութիւն չէր տալիս այն բանին, թէ ինչ կարող է պատահել արձանների հետ, այլապէս այդ խնդիրը այդպէս հեշտ անտես չէր անի, մանաւանդ՝ որ ինչպէս երևում է, ամբողջ սաստիկ տրամադրւած էր Գալացցու տւած խորհուրդ կատարել: Այն այդ փոքր է, կարելի է մինչև անգամ կարծել, որ արձանների դէմ արած

տութեան առաջին օրերը նէապօլիները բնականապէս անձնատուր էին եղել ուրախութեան զգացմունքներին և արդէն տրամադրւած էին կարծելու, որ ամեն բան վերջացած է և նրանց քնում է միայն այդքան հեշտ, հրաշալի կերպով ձեռք բերած ազատութիւնով զւարճանալ: Գարիբալդին՝ ինքը չափազանց կարևոր էր համարում ներշնչել ժողովրդին, որ դեռ վերջացած չէ և որ դեռ նրանից նոր ջանքեր է պահանջուում Իտալիայի ազատութիւնը ամուր հիմքի վրա դնելու:

Ահա նոյն իսկ այդ ներշնչմանն է դիմում և Գալացցին, նա շատ ճարտար կեպով շօշափում է իր ունկնդիրների զգայուն թելերը, մատնացոյց անելով նրանց այն եղբայրական օգնութեանը, որ իրանք ստացան Իտալիայի միւս որդիներից և ապա նրանց համոզում է, որ անհրաժեշտ է շարունակել ազատութեան պատերազմը, որով օգնած կլինեն անկախութիւն ձեռք բերել նրանց, որոնք դեռ ևս

ցոյցին առիթ են տւել նոյն իսկ ժողովրդի մէջ տարածւած նախօրօք խօսակցութիւնները և տրամադրութիւնը: Ժողովրդին անպայման հարկաւոր է, եթէ ոչ թշնամին՝ ինքը, բայց գոնէ նրա արձանը, նրա լուսանկարը մի որևիցէ էական բան, որի վրայ կարելի լինէր իր մաղձը թափել, վրէժը յագեցել: Սիցիլիայում Բուրբոնների արձանները կործանւեցան. նոյն բանին կարող էր դիմել և ժողովրդի ոգևորութիւնը՝ Նէապօլում: Ի հարկէ Գալացցին էլ այդպիսի մի շարժում յանդիմանելու չէր ձգտի, բայց ինչպէս խեղացի մարդ, ի հարկէ, նա հասկացաւ, որ այսպիսի սխրագործութիւններից ոչինչ մի առանձին բարերար գործ չէր գուրս գայ Իտալական անկախութեան համար. ահա

ճնշում են լծի տակ: Բայց որովհետև նեպոլիտները իրար անհաւատարմութեամբ էին վերաբերում, որ երկարատև ճնշած լինելու հետևանք էր, հետեւապէս և, ինչպէս միշտ լինում է, բաւական սառնասիրտ էին այն բոլորին, ինչ որ իրանց ուղղակի չէր վերաբերում, ուստի Գալացցին առանձին հաստատակամութեամբ բացատրում է նրանց, թէ միութիւնը ինչպիսի մեծ ոյժ է և թէ ինչպէս պառակտումը կարող է արգելք լինել յաջողութեանը և մինչև անգամ ոչնչացնել բոլոր ձեռք բերածները: Հռետորը պատելում է ունկնդիրներին, որ գործը իրանք վարեն, կողմնակի օգնութիւն չսպասեն, ամբողջ Իտալիայի գործը իրանց գործ համարեն և միայն Նէպոլիով ու Սիցիլիայով չբաւականանան: Վերջապէս նա միջոցներ է մատնացոյց անում, որոնցով կարելի է ժողովրդի մէջ մշտապէս աշխոյժ և գործունեայ սեր պահպանել ղէպի ազատութիւն: Խօսելով այդ միջոցների մասին, Գալացցին դիմում է կանանց, քահանաներին և լրագրներին: Նրա ծառի վարժաբանը կազմում է մի ինչ որ փառաբանութիւն ղէպի Իտալիայի միութիւնը, ղէպի Գարիբալդին և Վիկտոր Էմմանուէլը:

Այսպիսի կազմութիւն ունի Գալացցու առաջին ճառը, որի սկիզբը վերը թարգմանեցինք:

Թէ ինչո՞ւ նա այդպէս թեթև կերպով շօշափեց այդ առարկան և այդպէս էլ արագ, մինչև անգամ անյարմար կերպով հեռացաւ առարկայից, ինչ ձևով որ մտեցել էր: Այլ հանգամանքներում նա այդպէս չէր վարում: օրինակ— նա խօսեց Սէնտ-Ղլմա ամրոցի մասին և այդտեղ կարողացաւ դրական հետեանքների հասնել:

Յաճախ նրա յորդորները մերկացումների են հասնում և այդ ղէպքում ամենից աւելի յարձակում է անարժան հոգեորականութեան և պապ-թագաւորի դէմ: Ինչպէս տեսնում ենք, նիւթը դարձեալ առաջնակարգ է, և միանգամայն արժէ զբաղել զբանով, հէնց ամենաառաջին քարոզում, որ ասաց նա ազատած ժողովրդին. Նէպոլում: Սակայն ինչպէս այս, նոյնպէս և այլ ղէպքում Գալացցին գերազանցում է նրանով, որ զարմանալի ճարտարութեամբ ասում է ժողովրդին իսկական ճշմարտութիւնը, առանց նրա կրքերը զրգուելու: Օրինակ— արժէ կարգալ թէ ինչպէս նա սպացուցանում է Նէպոլիտներին, որ նրանք իրանց սեպհական ոյժերով ոչինչ չէին կարող անել առանց միւս իտալացիների և ուստի փորձը, արդարապատութիւնը, երախտագիտութիւնը պահանջում են, որ նրանք ևս ուրիշների վերաբերեալ գործեն այնպէս, ինչպէս ուրիշները արին իրանց համար: Խօսելով, որ «գործի և մտքի միութիւնը նրանց երախտագիտութեան պարտքն է կազմում և որ այդ նրանց շահերն ու անհրաժեշտութիւնն է պահանջում», հռետորը շարունակում է.

«Մի քանի ամիս ես լսեցի Նէպոլում ծագած յեղափոխական շարժումի մասին, յետոյ յայանի կերպով ապստամբութիւն ծագեց Սիցիլիայում: Անկեղծ խօսենք— մի՞ թէ Սիցիլիան միայնակ իր սեպհական ոյժերով յաղթանակ կտանէր, պարզ է. ի հարկէ ոչ: Սիցիլիական շարժումը ջերմ, ազնիւ, ուժեղ շարժում էր, ամեն բանի, մինչև արեան վեր-

ջին կաթիլը թափելու պատրաստ, բայց սիցիլիական հերոսները միայնակ յոժերով կրնկճէին ատելի Բուրբոնի կազմակերպած յոժի առաջ: Եւ դուք Վեգոլվի որդիք, թէև տարաք այն բոլորը, ինչ որ մարդկային հոգին, սիրտը, մարմինը կարող էր տանել մի այնպիսի դարշելի կառավարութեան օրերում, որ իրաւացի կերպով կոչուում է՝ «Աստուածային բացասումներ», այսինքն՝ սատանայի կառավարութիւն, գեհնէի մարմնացուցի Ծերդինանդի և Պրանցիսկոսի կերպարանքով— դուք, ինքներդ միայնակ կարող էիք արդեօք ձեր օրինական վրէժը լուծել: Արդեօք միայնակ կարող էիք տապալել այդ սաթայելի դահր և ազատել աւազակների ու գահիճների ատելի լծից. ո՛չ: Ո՞վ հանդիսաւոր արեց Սիցիլիայի ապստամբութիւնը. ո՞վ յաղթանակով պսակեց նէպոլիտանեան յեղափոխութիւնը,— մի մարդ.... ո՛չ, Աստուծուց ուղարկւած մի հրեշտակ— հերոս Գարիբալդին (ամբոխի մէջ viva Garibaldi!): Առանց Գարիբալդու երկու Սիցիլիայի երկիրներն ևս մինչև օրըս շղթայւած կլինէին: Իէպի նա է դիմում մեր սրտի երախտադիտութիւնը, կեցցէ Գարիբալդին (ամբոխը մի քանի անգամ կրկնում է միևնոյն բացականչութիւնը): Իսկ ո՞վ էր Գարիբալդուն ուղեկցում նրա սիցիլիական արշաւանքի ժամանակ, ո՞վ էր նրան հետևում Կալաբրիայի միջով մինչև Նէպոլ— իտալական երիտասարդութիւնը.... սկսած իտալական բոլոր գաւառներից առանց բացառութեան.... Նրանք, այդ քաջարի պատանիները— լսեցին տանջողների հեծկտանքը, ապստամբ-

ների հրաւերը և նրանք մեծ մասամբ, զոհեցին իրանց հանգստութիւնը, բաւականութիւնները, իրանց մատաղ կեանքի փայլը, հարստութիւնը, յարմարութիւնները, փարթամութիւնները, զարծու-թիւնները.... և յաղթանակը նրանք տարան: Մարտալուծ ափ իջնելուց սկսած մինչև Նէպոլ մրտնելը մեր Գարիբալդու ընթացքը մի յաղթական գնացք էր: Եւ նա միշտ կ'յաղթանակէ, որովհետև 'ի դէմս նրա կուրի է դուրս գալիս ինքը՝ քաջութիւնը, պատիւը, արդարադատութիւնը, մի խօսքով— Աստուծոյ գործը — որովհետև ժողովրդի գործը Աստուծոյ գործն է: Այո՛, Աստուած միշտ յաղթութիւն է տալիս իր ուղարկածին (ծափահարութիւններ):

«Իէ՛հ ուրեքն դուք տեսնում էք, որ իտալիայի՝ մեր հայրենիքի բոլոր մասերը ձեզ համար ազատողներ ուղարկեցին և նրանց օգնութեամբ ձեր ազատամիտ մարդիկ և ձեր ազգային հեծեղադունդը կարողացան քաջութեան հրաշքներ գործել.... Այո՛, իտալական միւս աշխարհներից ձեզ համար եկած ազատութիւնը ձեր վրա երախտադիտութեան սրբազան պարտք է դնում: Ի՞նչ այդ պարտքը չէք կարող վերադարձնել ո՛չ ոտանաւորներով, ո՛չ երգերով, ո՛չ երաժշտութեամբ, ո՛չ ներկայացուցիչներով, ո՛չ խնձոյքներով, ո՛չ տօնակատարութիւններով, ո՛չ ճաշկերոյթներով... Ո՛չ, դուք միայն կ'վերադարձնէք լեզեօններով, հրացաններով, ձիերով և թնդանօթներով. կ'վերադարձնէք կուր-լով ձեր հերթին իտալական մնացեալ երկրների

համար, որոնք զեռ սարկութեան մէջ են (բրաւի- սիմօ... viva Italia!..): Ով ձեզ համար էր կրու- ւում, այժմ պահանջում է, որ դուք էլ նրա համար կուէք: Սկանջ դրէք այն կամուօրների արտասա- նութեանը, որոնցով ներկայումս լեքն է ձեր դեղե- ցիկ քաղաքը, դրանց առանց դժարութեան կձա- նաչէք, դրանք պիէմոնտցիներ, ղինուէզցիներ են, — այն բաղաւոր դաւառների որդիքը, որոնք Կարո- լոս Ալբերտի սահմանադրութեան օրից ազատ են: Եթէ նրանք էլ ասէին. «Սհա 12 տարի է արդէն, որ մենք օգաւում ենք ազատութեամբ՝ էլ մեզ ի՞նչ կարիք զոհել Սիցիլիացիների և Նէապոլցիների համար», այն ժամանակ զրկւած կլինենք պիէմոնտ- ցիների և գէնուէզցիների օգնութիւնից... Իսկ դուք լսում էք նրանց խօսակցութիւնը... լսում էք դուք այդ լոմբարդացիների, բոմանոնների, տոսկա- նացիների բարբառը, որոնք ազատութիւն ստացան այն օրից, երբ դրանց դաւառները միացան իտա- լական նոր թագաւորութեանը: Ի՞նչ, եթէ նրանք էլ ասէին. «Մենք այժմ միացած ենք Պիէմոնտի հետ, մենք օգաւում ենք իտալական ազատու- թեամբ, մեզ ի՞նչ կարիք Նէապոլի և Սիցիլիայի անկախութեան համար աշխատել, այն ժամանակ կվայելէինք արդեօք նրանց օգնութիւնը... Իսկ Վե- նետիկցիները. լսեցէք նրանց արտասանութիւնը, կամ աւելի լաւ ասած՝ լսեցէք այդ խեղճ, չարա- բաստիկ, տանջւած, մահամերձ, բայց միշտ աղնիւ վեհանձն Վենետիկի բազմատեսակ արտասանութիւն- ները: Ո՛հ, զեռ ես այսքան ժամանակ շղթայւած

եմ—զոչում է նա ձեզ—ես մահւում եմ աւստրիա- ցու լծի տակ... բայց և այնպէս՝ իմ երիտասարդու- թեան ծաղիկներն ուղարկում եմ Նէապոլը և Սի- ցիլիան ազատելու, որպէսզի Սիցիլիան, Նէապոլն էլ իրանց հերթին դան ազատելու ի դէմս իմ՝ մի խեղճ նահատակի, որ երբեմն Սիցիլիայի թա- զուհին էր» (ամբօխի մէջ ոգևորւած աղաղակ Վե- նետիկի մասին):

Այդպէս՝ երախտագիտութեան զգացմունքի հա- մեմատ ամենքիդ անհրաժեշտ է մի ազգային զգաց- մունքով միանալ... Իսկ մեր ազգային զգացմունքը պարունակում է հետեւեալ նշանաբանի մէջ—Ան- կախ Իտալիա՝ Այպերից սկսած... ո՛չ միայն մինչև Սիցիլիա, այլ Այպերից սկսած մինչև Լիլիբէյ... Ամբողջը, ամբողջը, ամբողջը... անկախ օտար երկիր- ներից, ովքեր ուզում են նրանք լինեն... (Ճափաճա- բութիւններ):

«Սսենք, եթէ երախտագիտութիւնը չլսուի բոլորի սրտում, նոյնը մեզ շահը կասի. իսկ շահ ամենքս էլ ունենք... Թոյմաս Ակվինացին ասում է, որ առանց շահի մինչև անգամ Աստուծուն էլ չէինք սիրի. «ինչո՞ւ ենք նրան պաշտում և սիրում—հար- ցնում է մեծ ուսուցիչը— որովհետև նրանից երկնա- յին արքայութիւն ենք սպասում»:

«Այդպէս՝ մինչև անգամ Աստուծոյ և մեր յա- րաբերութիւնների մէջ շահն է գործում. և որով- հետև այդ կէտի վերաբերեալ մենք ամենքս հեշ- տութեամբ կարող ենք համաձայնել, ուստի կա- սեմ, որ այժմ մենք ամենքս Իտալացիներ պիտի լի-

նենք, մինչև անգամ մեր շահի համար: Վերջապէս՝
 Խաղաղայինները դասն այն մեծ ճշմարտութիւնը, որ
 ազգերի մէջ որքան սերտէ կապը, այնքան ամուր
 է իւրաքանչիւր առանձին երկրի քաղաքացիների
 իրար մէջ եղած կապը և եթէ ազգերը իրար
 հետ չեն համաձայնուում, միեւնոյն է լինում, ինչ որ
 եղաւ 1848 թւին, երբ Կրօտաները դէմ էին յուն-
 վարներին, յունգարները մասամբ խաղաղայիններին
 և գործը վերջացաւ նրանով, որ Աւստրիան ամեն
 բան իր ոտքի տակ դրաւ... Բայց վայ նրան, ով իր
 պարտքը չգիտէ և իր մասը չէ ճանաչում ընդհա-
 նուր գործում... Իսկ մեզանում ընդհանուր գործը
 ամենիս համար մէկ է. մենք Իտալիա ենք ուզում
 ստեղծել. ամենքս էլ մէկ լինենք, մի ազգ կազմենք:

«Պօղոս առաքեալը ասում է. երբ մարմնի մի
 անդամը հիւանդ է, նրա պատճառով միւսներն էլ
 վնասուում են. դժւար չէ մեզ հասկանալ, որ եթէ
 Վենետիկը մնում է սարկութեան մէջ, եթէ հռովմե-
 ական երկրների մի մասը ճնշուում է, կնշանակէ՝ Ի-
 տալիան դեռ Իտալիա չէ և մեզ անհրաժեշտ է նոյն
 իսկ այժմ փշրել վերջին շղթաները, որոնք ճնշում
 են նրան: Գործը մեր շահերի մասին է. եթէ ան-
 առնեան կրակը (Антоновъ огонь) թողնենք մարմ-
 նի մի որեէ անդամի մէջ, նոյն իսկ ձկոյտում, նա
 տակաւ առ տակաւ պատում է ամբողջ դաստակը,
 ձեռքը, ուսը, ամբողջ մարմինը և մարդ մեռնում
 է... Նոյնն էլ այստեղ է: Թողէ՛ք Վենետիկը նւաճ-
 ւած դրութեան մէջ, ամբողջ Իտալիան նորից կրնի-
 ձել... Եւ այդպէս՝ նոյն իսկ մեր շահն է պահան-

ջում, որ մենք բոլորս ազատ լինենք և մենք՝ բո-
 լորս ազատ կլինենք:

«Սպասել, որ ուրիշները վերականգնեն Իտա-
 լիան— այսպիսի բան չափից դուրս շատ կլինէր, բա-
 րեկամներս. Իտալիայի համար աշխատել աւելի քան
 սարսափելի է զիպլոմացիայի համար: Մենք ինքնե-
 ըրս պիտի վերականգնենք Իտալիան, իմ բարեկամ-
 ներս, ոչ թէ որպէս Վելլա—Ֆրանկոնի ձեռով, այլ Իրա-
 լական ձեռով: Այդ նշանակում է— մեզ պէտք չէ Իտա-
 լական դաշնագրութիւն, այլ միութիւն է հարկաւոր,
 միութիւն և ոչ դաշնակցութիւն: Դաշնակցութիւն
 խօսքով պիտի հասկանանք— Կոնֆետերացիա պա-
 պի, Ֆրանչիսկոյի, Տոսկանեան մեծ իշխանի, աւստ-
 րիական Վայսրի և Վիկտոր Էմմանուէլի հետ՝ բո-
 լորը միասին... հաճելի միութիւն, այնպէս չէ՞, սի-
 րելի բարեկամներս: Տնում հայրասպաններին աքա-
 ղաղի, շան, կապկի և օձի հետ միասին կարում էին
 մի պարկում... հիանալի ժողովածու... Վիկտոր
 Էմմանուէլը ոչ ոքի չէ սպանել, և այն ինչ ուզում
 էին նրան աւելի վատ աեղ ձգել քան աքաղաղի,
 շան, օձի և կապկի հետ միասին լինելը:

«Մեր բարիքի համար մեր բարի Վիկտոր Էմ-
 մանուէլին այդպիսի ընկերակցութիւն չենք կամե-
 նում— ուղիղ չէ՞, իմ բարեկամներ. կնշանակէ մենք
 դաշնակցութիւն չենք կամենում: Դաշնակցութիւն
 — երբէ՛ք, երբէ՛ք, երբէ՛ք... միութիւն, միութիւն,
 միշտ միացեալ Իտալիա (բարձրաձայն viva Իտալիայի
 միութեանը, Վիկտոր Էմմանուէլին և Գարիբալ-
 դուն): Դուք չէք մոռանայ այդ զանազանութիւ-

նր: Եւ իմացէ՛ք, եթէ ջերմ կերպով կցանկաք դուք այն, ինչ որ ձեզ պէտք է, անպատճառ կտանաք: Ըստ իմ, բաւական է, որ իտալիացիք կամենան և այն՝ ինչ որ նրանք կկամենան, կլինի: Օտարերկրացիները շատ վատ լուրեր կին տարածում մեր մասին. նրանք ասում էին, որ մենք կուել չգիտենք. այն ինչ մենք կուում էինք: Ստում էին, որ անընդունակ ենք մեր ազատութիւնը վերագարձնել, այն ինչ վերագարձրինք: Հաւատացնում էին, որ չենք կարող խելացի և չափաւոր կերպով օգուել յաղթութիւնից. բայց և այնպէս յաղթութեան ժամանակ խաղաղ մնացինք և մեզ պահեցինք: Պնդում էին, թէ մենք սահմանդրական կազմակերպութիւն էլ ստանանք, ինչպէս հարկն է, չենք կարող պահպանել, իսկ մենք ահա՛ պահպանում ենք: Վերջապէս՝ դռնում էին, որ մենք անընդունակ ենք անջատել մունիցիպալական ձգտումներից, քաղաքների իրար մէջ մրցելուց և նախանձից. իսկ մենք ահա՛ թողեցինք մունիցիպալականութիւն, բոլոր մանր, տեղային թշնամութիւնները... կնշանակէ ցոյց տւինք օտարերկրացիներին, որ մենք կարող ենք իտալացիներ լինել և որ իտալացիք—Ստաւած իմ—այս հրաշալի երկնքով, այս արեգակով, որ նրանց գլխների վերև լոյս է տալիս, իրանց հոգւով, իրանց սրտով և մկաններով—առաջինն են. այո՛, առաջին, առաջին ազգն են աշխարհումս (սաստիկ eviva):

«Այժմ՝ մեզ մնում է ազգային զգացմունքը

մեր մէջ լաւ արմատացնել. պէտք է սկսենք իտալիացի դառնալ և մեզ իտալացի խոստովանել:

«Երբ որևէ Փրանսիացու հարցնում էք, ո՞ր տեղացի է նա — պատասխանում է — էս Փրանսիացից եմ: Ո՞րն է ձեր հայրենիքը—Փրանսիան: Ո՞վ էք դուք—Փրանսիացի: Լինի նա դասկոնցի, պրավանսալցի, կամ թէ Փրանսիական որևէ դաւառի որդին, պատասխանը միշտ միևնոյնն է:

«Նոյնն է պատահում անդլիացու հետ: Հարցրէ՛ք նրան որ աշխարհիցն է — պատասխանում է — Անդլիայից: — Ո՞վ էք դուք. — Անդլիացի: Նա չէ ասում, ես գլասգովցի եմ, մանչեսթերցի եմ, այլ ասում է — Ես անդլիացի եմ... Նոյնը մենք պէտք է լինենք: Մենք այլ ևս պիէմոնդցիներ, դինուէզցիներ, լոմբարտացիներ, բոմանոլներ, տոսկանցիներ, նէպոլցիներ, սիցիլիացիներ չենք, մենք բոլորս՝ իտալացիներ ենք (օգեւորւած ծափահարութիւններ):

«Ո՞րն է ձեր հայրենիքը.....

Այս հարցից յետ՝ հռետորը կանգ առաւ: Բոլոր ամբոխը յափշտակւած աղաղակում է — Բրայիան-Բրայիան: Գարոզիչը թոյլ է տալիս, որ ամբոխը լռէ և հպարտ ուղղւելով ինքը ևս օգեւորւած բացականչում է — Բրայիան: Յետոյ՝ շարունակում է արծարծել այն միտքը, թէ որքան պատւաւոր և փառաւոր բան է իտալացու համար — Իտալիային պատկանել, որքան դիւրին կլինի նրանց համար ձեռք բերել այլ ազգերի յարգանքն ու բարեկամութիւնը, եթէ միայն բոլորը կմիանան: Տեսնելով, որ մենք

միացած ենք, ասում է նա, կսկսեն մեզ աւելի շատ յարգել, կսկսեն վախենայ, յետոյ՝ կսկսեն մեր բարեկամութիւնը հայցել, յետոյ՝ մեր օգնութիւնը կփնտռեն: Միահամուռ ծափահարութիւն յարուցանելով այս խօսքերով, քարոզիչը ունկնդիրներին նկարագրում է մօտիկ ապագան, երբ Իտալիան կներկայանայ բոլոր ճնշւած ազգերի ազատարար և պաշտպան: Լսում են ամբոխի մեջ նոր ծափահարութիւններ և հռետորը նորից դիմում է իտալացւոց ազգային զգացմունքներին և պահանջում է, որ նրանք բոլորը միանան և վռնդեն Բուրբոններին, աւստրիացիներին և պապ թագաւորին... Պապի մասին յիշատակելով և երևի նկատելով ամբոխի մէջ յայտնի անհամաձայնութեան նշոյլներ, Գալաղացին հետևեալ բացատրութիւնն է անում.

«Պարոններ, ես չեմ մոռացել, որ Նէպօլեոն էմ խօսում և շատ լաւ դիտեմ, որ պապին հռովմից հեռացնելու միտքը ձեզանից շատերին կարող է վրդովել:

«Փոխեցէք համոզմունքներդ և հանդստացրէք ձեր խիղճը: Ոչ ոք համարեա մտադիր չէ պապին դիպչել: Պապ: Ոչ ոք չէ ուզում սուրբ անձի մազին անգամ դիպչել: Թող պապը հռովմում մնայ, եթէ միայն նա ցանկանում է, միայն թող նա հռովմի եպիսկոպոսը լինի և ոչ ոք նրան հակառակ խօսք չէ ասի: Բայց թագաւոր, թագաւոր (ամբօխը— ո՛չ, ո՛չ, ո՛չ) մենք նրան այլ ևս թագաւոր ունենալ չենք ցանկանում: Թող քահանան քահանայ

մնայ և լինի Պիոս IX և թող թագաւորը դառնայ թագաւոր և լինի Վիկտոր էմմանուէլ...»

«Այսու ամենայնիւ, որպէս զի կասկածամիտ մարդիկներին վերջնականապէս հասկացնեմ (ծիծաղ), հարցը կշռափեմ սուրբ Գրքի մտքին համեմատ, քրիստոնէութեան տեսակէտից, որ կարծեմ ժողովրդին հաղորդելու նրանց խոստովանահայրերը և առաքինի արքեպիսկոպոսները չեն հողացել: Ասում են, որ (այս ինկատի առէք) պապը Յիսուս Քրիստոսի փոխանորդն է, սուրբ Պետրոսի յաջորդ, եկեղեցու զլուխ, հռովմէական առաջին եպիսկոպոսների յաջորդ: Լաւ, շատ լաւ: Բայց ինձ ասէք— Քրիստոսը թագաւոր էր. Քրիստոսը մարմնաւոր իշխանութիւն ունէր. ո՛չ: Քրիստոսը իր փոխարէն թագաւորական թագ կտակէց (ամբօխի մէջ— ո՛չ): Ո՛չ: Ուրեմն այդպէս, եթէ պապը իսկապէս Քրիստոսի փոխանորդն է, նա թագաւոր լինել չէ կարող (ծափահարութիւններ):

«Իսկ սուրբ Պետրոսը, նա թագաւոր էր. ո՛չ: Սուրբ Պետրոսը... Ո՛չ, նա ձկնորս էր, ապրում էր իբրև ձկնորս և ձկնորս էլ մեռաւ. միմիայն ձուկ որսալու փոխանակ, նա օգնում էր Փրկչին մարդկային հոգիներ որսալու գործում... բայց նա երբէք թագաւոր չէ եղել: Ուրեմն՝ եթէ պապը սուրբ Պետրոսի իսկական յաջորդն է, թագաւոր լինել չէ կարող:

«Պօղոսը — հռովմէական եկեղեցու իսկական հիմնադիրը, քրիստոնէութեան իսկական հիմնադիրը Եսայիայուհի — թագաւոր չէր և իրան անւանում էր տրուպի առաքելոց, ուստի պապը, թէ

նա եկեղեցու գլուխ է, նա չէր կարող, նա չպէտք է
Թագաւոր լինի:

«Ճռովմէական առաջին եպիսկոպոսները մին-
չև Սիլվեստր, մինչև անգամ չիլդէրրանդ (Գրի-
գոր V II) աշխարհական տիրապետողներ չէին, Թագա-
ւորներ չէին: Եթէ պապը ուզում է դրանց իսկական
յաջորդ լինել, ի՞նչպէս կարող է մարմնաւոր իշխա-
նութիւն ունենալ:

«Սյսպէս ուրեմն՝ պապը 'ի պատիւ իւր պաշ-
տօնի, 'ի պատիւ իւր քահանայական աստիճանի,
'ի պատիւ քրիստոնէութեան, եկեղեցու, կրօնի, 'ի
պատիւ հաւատի և Աւետարանի, 'ի պատիւ Քրիս-
տոս— Աստուծոյ, այլ ևս չէ կարող, այլ ևս չպէտք է
լինի և չի էլ կարող այսուհետև Թագաւոր լինել:
Եւ երբ նրա մարմնաւոր իշխանութիւնը կոչնչաց-
նենք, միայն այն ժամանակ իտալացում կրօնին կը-
տանք այն փայլուն և ճաճանչագեղ պսակը, որպի-
սին նա կարող է միայն իտալական ազատութիւ-
նից սպասել:

«Բայց պապը ուզում է Թագաւոր լինել... Նա
պաշտպաններ ունի, որոնք ցանկանում են պապը
Թագաւոր մնայ... իսկ մենք այդ չենք ցանկանում
(անընդհատ ծափահարութիւն): Եւ այդպէս՝ ինչ-
պէս նա չէ կարող Թագաւոր մնալ, այնպէս էլ մի
որևէ միջոց կգտնելի, որով նա գահը Վիկտոր էմ-
մանուէլին կթողնի: Եւ երբ Վիկտոր էմմանուէլը
կապիտալիի բարձրութեան վրա կլինի և ամբողջ
իտալիան նրա շուրջը կխմբւի, այն ժամանակ կճշտ-
ւի մեծ Մաքիավելլու խօսքը. «Բանի պապերը ի-

տալիայում կլինեն, այնտեղ միութիւն չի լինի.
Բայց այն օրը, երբ պապը Թագաւոր լինելուց կդա-
դարի, Իտալիան մեծ ազգ կդառնայ, նա կվերածն-
ւի» (ծափահարութիւններ):

Ճառի վերջը հռետորը մասնացոյց է անում
այն միջոցները, որով կարող է Իտալիան վերածն-
ւել. այդ միջոցներն են՝ կանայք, լրագրութիւնը և
հոգեւորականութիւնը:

«Կանայք. դրանց մասին մի այլ անգամ աւե-
լի կխօսեմ, իսկ այժմ դիմում եմ միայն մի
քանի խօսքով: Երբ մեր իտալուհիք սրտի հերո-
սութեամբ «Սպարտայի» կանանց կնամանկն, այն
ժամանակ մենք ազգ կկազմենք: Սյն աղօթքները,
որ մեր մայրերը լատիներէն մըմնջում են և որը ոչ
նրանք են հասկանում և ոչ մենք, ի՞նչ բանի են
ծառայում, արդե՞օք զուր ժամանակ և զուր ջանք
գործ դնել չէ նշանակում: Արդե՞օք Պօղոս առա-
քեալը չասաց, որ անձանօթ և անհասկանալի լեզ-
ւով աղօթելիս, ոչ միայն զուր ժամանակ են կորց-
նում, այլ և Աստուծուն չեն պատուում: Լաւ է,
հարիւր անգամ լաւ, պարզ կերպով մի անգամ ա-
սել իտալերէն «Padre nostro che sei incieli»,
քան թէ 150 անգամ ձեր տերողորմիայի ամբողջ
երկարութեամբ հաշւելով, թոթովել «Ave Maria».
այս նշանակում է իւրաքանչիւր օր 150 անպէտք
բաներ կրկնել:

«Այժմ աւելի լաւ է մեր պատանիները հրա-
ցան առնեն և զնան հայրենիք պաշտպանելու, քան
պատարագի ժամանակ սպասաւորութիւն անեն:

Մայրէր, ներկայումս ձեր որդիներանցից սնապաշտ-
 ներ, կեղծաւորներ պատրաստելով, դրանով ձեզ
 համար պսակ, զարդարանք չէք հիւսի, այլ միայն
 նրանով, եթէ դուք կարող կլինէք ասել—իմ որ-
 դին օգնում էր Իտալիայի վերածնութեանը (բուռն
 ծափահարութիւններ): Մայրէր, թո՛ղ այս ժողովու-
 դի ծափահարութիւնը ձեզ քաջալերի, այսօրից
 իսկ ոչ թէ եկեղեցու սպասաւորներ, այլ զինուոր-
 ներ, հայրենասէրներ դաստիարակել... Կեցցէ՛ առա-
 քինի մայր—իտալուհին (նոր ծափահարութիւններ):

«Լրագիրներ. դրանք բազմաթիւ են Նէապո-
 լում, իսկ Նէապոլը իր հանձարի, փիլիսոփայու-
 թեան և բանաստեղծութեան գանձերով առաջին
 տեղն է բռնում ամբողջ Իտալիայում: Մամուլը
 պէտք է օգտւի այդ հրաշալի զէնքով յօգուտ
 հայրենիքի...»

«Նրապարակխօսներ, մեծ է, ազնիւ է և վսեմ՝
 ձեր կոչումը... Գործադրեցէ՛ք այն իբրև մի ազ-
 դային սրբութիւն: Թողէ՛ք յանդիմանութիւնները,
 բամբասանքները, անձնականը, որոնցով շատ օտա-
 րերկրեայ լրագիրներ ամեն օր իրանց ստորացնում
 են... Որոշեցէ՛ք, միանգամից նւիրել ժողովրդի
 դաստիարակութեանը, զարգացմանը, կրթութեա-
 նը, աչքի առաջ ունենալով իտալական ազգայնու-
 թիւնը, իտալական միութիւնը, Իտալիայի յոյսերը,
 նրա ապագան, նրա թագը:

«Նոգեւորականութիւն... Այժմ մի խօսք միայն,
 որովհետև դրանց մի ուրիշ անգամ կգառնամ...
 Այժմ միայն կասեմ՝ Աստուծուց շնորհակալ եմ, որ

Նէապոլում Նոգեւորականների մէջ բարի և հայրե-
 նասէր անձեր գտնւեցան. թէև ուղիղն ասած, նրանք
 փոքրամասնութիւն են կազմում... Նէապոլիտա-
 նեան կղերի մեծամասնութիւնը թէ շահերով, թէ
 սնտախապաշտութիւնով, թէ ազահութիւնով, թէ
 իր յետադէմ և աւստրիական արքեպիսկոպոսին ցոյց
 տւած թիւր հասկացած հպատակութիւնով ի-
 տալական միութեան թշնամի ներկայացրեց իրան.
 ուստի կղերը պէտք է քաւի, իրան վերականգնէ
 Իտալիայի առաջ և ահա այժմ ի՛նչ կասեմ դրան
 —կղէր, իտալական կղէր, այժմ Իտալիայի օգտին
 գործ դի՛ր այն ազգեցութիւնդ, որ մինչև այժմ
 Բուրբոնների և բռնակալութեան օգտին այդքան
 չարը գործ դրիր: (Ծափահարութիւն): Կղէր, Նէա-
 պոլիտանեան կղէր, սեղանը, քահանայութիւնը,
 ամբիոնը և մանաւանդ խոստովանանքը դո՛ւ չարը
 գործ դրիր. (Ծափահարութիւն՝ մանաւանդ կին ունկն-
 ղիւրների մասում): Կղէր, այս պալատի անպատիւ
 բնակիչներին հաճոյանալու համար դո՛ւ մինչև մասնիչի
 և ոստիկանական լրտեսի աստիճանը ստորացար...
 Կղէր, քո բազմաթիւ ամբաստանութիւնների շնոր-
 հիւ Նէապոլիտանեան շատ հայրենասէրներ բանտի,
 տաժանակիր աշխատանքի, աքսորի, մահաւան դա-
 տապարտւեցան... Կղէր, կղէր, վերածնւիր Իտա-
 լիայի և Նէապոլի տեսքի առաջ, ուսիր ազատամիտ
 քահանաներիցդ, սակաւաթիւ անդամներիցդ, որոնք
 զիտեն ճշմարիտ հայրենասէր լինել ուսիր ծառայել
 հայրենիքին, ծառայել Իտալիային և մենք բռնակա-
 լութեան կղերին անիծելուց կզազարինք, որպէսզի

զովաբանենք, մեծարենք, օրհնենք ազատութեան և իտալական ազգայնութեան կղերին» (ճափահարութիւններ):

Մրանից յետ՝ առանց արհեստական թռոյցքների Գովաքցին ասում է. «Նէապօլիներ, վերջացնում եմ, որովհետեւ այսօր արդէն բաւական խօսեցի»:

Յետոյ՝ նրանց խոստանում է նոյն տեղում նորից քարոզել, միայն երրորդ օրը և ի լրումն— «Վիվաներ» է գոչում Իտալիային, Գարիբալդուն և Վիկտոր էմանուէլին.... 'իհարկէ ամբօխը բռնկուում է ոգևորւած eviva-ներով և երկար ուղեկցում է քարոզչին իր աղաղակներով:

Այս մեր հաղորդած ճառի նշանակութեան և արժանաւորութեան մասին ոչ մի դատողութիւն չաւելացնելով առաջ ենք բերում Գովաքցու երկրորդ քարոզը, որ շատ կարելի է, ամենանշանաւորն է նրա ասածների մէջ: Այդ՝ անհամբեր ազատամիտների դէմ է ուղղւած, որոնք աւելի իրանց շահերի համար էին ազատութիւն կամենում և ժողովրդի իսկական ձգտումների և պէտքերի մասին փոքր հասկացողութիւն ունէին: Դրանք էին, որ Գարիբալդու Նէապօլ գալուն պէս, իսկոյն դանդաատներ տւին, թէ ինչօ՞ւ այս ու այն բանը վատ է և ինչօ՞ւ այստեղ, այնտեղ պակասութիւններ, անկարգութիւններ են տիրում: Մի մասը յիմարութեան պատճառով էր աղաղակ բարձրացնում, որովհետեւ նրանք սպասում էին դարաւոր ամբողջ չարիքը մի ակնթարթում, մի հրաշքով ոչնչացած տեսնել,

մինչդեռ Գարիբալդին դեռ նոր էր Նէապօլում երևացել, իսկ միւսները իրանց նպատակների համար օգտուում էին այդ մարդու պարզամտութիւնից: Այդպէս՝ դեռ մինչև օրս Փրանսիական կղերական լրագիրները Նէապօլում ոչ մի անկարգութիւն անուշադիր չէին թողնում, որ չասեն. «Ահա՛ ձեզ ազատութիւն, ահա՛ և ազատամիտ կառավարութիւն, ահա՛ և Գարիբալդին.... Բուրբոնների օրով ոչ միայն ամեն բան վատթարացոյն էր, այլ ընդհակառակն մինչև անգամ՝ աւելի խաղաղութիւն և կարգ կար....»: Իե՞ռ Գարիբալդու Նէապօլ մուսւք գործած առաջին օրերը այդպիսի դատողութիւնները Գովաքցին ժողովում էր և նրանց վտանգաւոր լինելը հասկանում էր. ուստի իր երկրորդ քարոզով նա աշխատում է ոչնչացնել այդ մտքերը, դրանց դէմ երկու կերպ զինւելով. նախ՝ նա ցոյց է տալիս այդ մտքերի անհեթեթութիւնը, երկրորդ՝ ժողովրդին համոզում է — իրանց այնպէս պահեն, որ ազատութեան արմատ բռնելուն չխանգարեն և առիթ չտան Իտալիայի գործին թշնամի մարդոց յանդիմանութիւնները լսելու:

Արժէր, որ այդ քարոզը ամբողջը թարգմանւէր, եթէ միայն յարմար լինէր ռուս լեզուով հաղորդել այն բոլոր որոտումները, որ քարոզիչը թափեց Բուրբոնեան բռնակալութեան մասին և այն բոլոր վարմունքները, որ գործ դրեց կեղծաւոր ազատամիտների դէմ: Ի միջի այլոց մենք կփորձենք այդ ճառը այնպէս ներկայացնել, որ ընթերցողնե-

րը նրա մասին կարողանան մի որեէ հասկացողութիւն կազմել. ահա սկիզբը:

«Ամեն երկրում և ամեն դործում անբաւականներ են լինում: Մեզնում էլ անբաւականները նրանք են, որոնց կուսակցութիւնը պարտութիւն կրեց և այժմ սրա, նրա ականջում փչփչում են— «Գարիբալդին էլ եկաւ, ահա եօթն օր է արդէն, որ Նապօլումն է, մենք ի՞նչ շահւեցինք (այստեղ հռետորի խօսքին հետևում են նրա արտայայտող, ուժեղ ձևերը. ապա վառւած սկսում է): Դրանից ի՞նչ շահւեցինք..., այն, որ Բուրբոնները այլ ևս այստեղ չեն... Որ Փրանցիսկոս II-ը իր լրտեսների շքախմբով չկայ այլ ևս... Ահա թէ ի՞նչ շահւեցինք... ի՞նչ բարիք ձեռք բերինք... Իսկ ի՞նչ լաւ բան ունէինք Բուրբոնների ժամանակ (ամբօխի մէջ— ոչինչ, ոչինչ) Ոչինչ... Ոչ, աւելի վատ՝ քան ոչինչ, դուք զարհուրիչ դժոխք ունէիք ձեր մէջ... Դուք խառնակիչների, աւազակների, լրտեսների, դահիճների թագաւորութիւն ունէիք, քաղաքական մարդասպանների թագաւորութիւն... ահա ձեր օգուաները Բուրբոնների ժամանակ (համաձայնութիւն): Մի բան, որ Բուրբոնների օրերում ունէիք, այդ էր— մտքի ամեն տեսակ ազատութիւնից, խօսքի ամեն տեսակ ազատութիւնից, մամուլի, ժողովների ազատութիւնից և մարդ լինելու ամեն տեսակ ազատութիւնից զրկւած լինել... Բուրբոնը ձեր կեանքը ոստիկանութեան հսկողութեան տակ դրաւ, որի շնորհիւ մինչև անգամ ձեր բարեկամներից, ձեր ընտանիքից վախում էիք... Ահա թէ

ի՞նչպիսի առաւելութիւններ ունէիք Բուրբոնների օրով (բուռն ծափահարութիւններ): Բուրբոնը ոստիկանների զօրագնդերով շրջապատել էր ձեզ, որոնց յանձնարարւած էր հետևել ձեր մտքերին, խօսքերին, գործերին և որոնք ամեն բան յեղաշրջում էին, որպէսզի ձեր հաշուով ապրին. բացի այդ՝ որպէսզի խայտառակեն ձեզ, ձեր իտալական անունը և վշտի ու աղքատութեան մէջ ձգեն ձեր ընտանիքը: Ահա թէ ի՞նչ օգուաններ ունէիք Բուրբոնների ժամանակ (նոր ծափահարութիւններ): Դուք բաղաւորւած էիք խարդախ ոստիկանութեամբ, հարկաւոր է դրա հակառակը հասկանալ, որովհետև նա պէտք է ազնիւ քաղաքացիներին պաշտպան հանդիսանայ, գողերի, խարդախների, մարդասպանների դէմ, այն ինչ Բուրբոնների ոստիկանութիւնը, ընդհակառակը, գողերին, խարդախներին և մարդասպաններին հովանաւորում էր ընդդէմ ազնիւ քաղաքացիների (եռանդուն ծափահարութիւններ): Բուրբոնը ձեզ դատարաններ պարգևեց, որոնք ժողովրդի մէջ յանցանքներ չգտնելիս, իրանք դիտմամբ յանցանքներ էին հնարում, ժողովրդին կողոպտելու համար: Վամ թէ չէ, Վիկտորիա-Նիդիպա...*) տաժանակիր աշխատանք, աքսոր, կախաղան էր վիճակում նրանց... Ահա ձեր օգուաները Բուրբոնների ժամանակ: Մի խօսքով՝ Բուրբոնների օրով ոչ մի ազատութիւն, ոչ մի արտօնութիւն, նրանց օրով մինչև անգամ գիշերը ձեր անկողնում չէիք կարող փոքր ի շատէ հանգստութիւն վայելել. անային խուզարկութիւնը իւրաքան-

*) Բանտեր նէապօլում:

չիւր բոպէ կարող էր ձեր հանգստութիւնը վրդովել... կարող էր մահւան առիթ լինել այն պատաւաւոր կանանց համար, (որ և շատ անգամ ապացուցւած է) որոնք իրանց տների, ամուսինների խայտառակ լինելուց սարսափելով՝ համարձակութիւն էին ունենում բարձր պատշգամբներից ցած նետել, իրանց արիւնով լւանալով այն անպատուութիւնը, որ... (սարսափելի ծափահարութիւնների բռնկումը խլացնում է խօսքի վերջաւորութիւնը): Մի խօսքով՝ Բուրբոնները կամենում էին Իտալական առաջնակարգ ազգից—առաջնակարգ՝ խելքով, բանաստեղծութիւնով, փիլիսոփայական մտքի յոժով, գեղարւեստական հակումներով, սրտի ձգտումներով և ազատութեան սէր ունենալով—Իտալիայի ամենայեւին ազգերից մէկը դարձնել: Նէպոլցիներին այն աստիճան ճնշում, հալածում էին, որ նրանք ոչ միայն իտալացի լինելուց, այլ մարդ լինելուց դադարեցին: Ահա ի՞նչ շնորհեց ձեզ Բուրբոնը (ամբօսի մէջ ազաղակներ և յիշոցներ Բուրբոններին):

«Իսկ ի՞նչ տւեց Գարիբալդին—ազատութիւն, ազատութիւն, ազատութիւն (ծափահարութիւնների ծայթիւն և eviva Գարիբալդուն): Եւ երբ նա մեզ ազատութիւն տւեց... (ժողովրդի ուրախ աղաղակը խանգարում է հռետորին խօսքը վերջացնել): Տւէ՞ք ինձ այդ վեղովը, տւէ՞ք ինձ այդ ծոցը, տւէ՞ք ինձ բնութեան այդ բոլոր գեղեցկութիւնները, որոնք նէպոլը երկրային դրախտ են դարձնում—տւէ՞ք ինձ այդ բոլորը, բայց ազատութիւնից զուրկ—դուք ինձ կտաք մի անապատ, մի մութ

գիշեր, դժոխք (ամբօսի մէջ—շատ լաւ է, շատ լաւ): Եւ ընդհակառակը՝ տւէ՞ք ինձ մի անապատ, մի լերկ ժայռ, տւէ՞ք ամենավայրենի, անպտղաբեր, ամայի հողի մի պատառ—այդ բոլորը տւէ՞ք ինձ ազատ, ես կարող եմ դրանցից դրախտ ստեղծել (ծափահարութիւններ): Ազատութիւնից զուրկ ազգը խաւարի մէջ է շրջում, ազատութիւն վայելողը՝ լոյսի մէջ: Թո՞ղ օրհնւի լոյսը և օրհնւի նա, ով այդ լոյսը բերեց մեզ»:

Ունկնդիրների մէջ դարձեալ մի քանի անգամ ողևորւած բացականչութիւններ Գարիբալդու և մի քանի նոր անէծքներ Բուրբոնների դէմ յարուցանելով՝ Գավացցին դիմում է խօսքի գլխաւոր նիւթին—այն մարդոց անիրաւացի անբաւականութիւնները հերքելու, որոնք միայն Գարիբալդու նէպոլում լինելով էին կամենում բոլոր հին չարիքները մի հրաշքով, մի ակնթարթում բուժւած, վերացւած տեսնել:

«Նրանց, որոնք բոլորը միանգամից են ուզում—ասում է հռետորը—ես կբացատրեմ աւելի պարզ: Երևակայեցէք ձեզ ճահիճ, մի ընդարձակ տղմուտ ծովի ափի մօտ, ջուրը կանգնած է. տղմից բարձրանում են փտած, մահացնող միազմներ. այդ ճահիճը մաքրելու համար ջրի հոսանք է հարկաւոր: Ձիտակ մարդը ջրի այդ հոսանքը պատրաստել է առանձին աւազանում. նա բանում է սահանափակները (ПЛОУЗЫ), ջուրը առաջ է ընթանում, թափւում է ճահիճի մէջ և վազում է դէպի ծովը, տանելով իր հետ փտութիւններն ու միազմները...»

Բայց ջուրը քաշելուց յետ, դեանի վրա քարեր, աւազ, ամեն տեսակ անպէտք իրեր էք նկատում, որոնց ջուրն է բերել իր հոսանքի հետ... Այն ժամանակ յայտնուում է հմուտ երկրաչափը, ջրաբաշխը մի մարդ, որ պատելուում է ամեն աւելորդութիւնից մաքրել տարածութիւնը և ջրի հոսանքի համար մշտական դաշտ է պատրաստում և այդպիսով ոչնչացնում է ծահիճը և այդ տեղը ազատում է դարշահոտ միազմներից: Նոյնը կարելի է փոխարեւել Նէպոլի մասին: «Աստուածային բացասումնք» անւանը արժանացած կառավարութեան օրով Նէպոլը մի ազտոտ աղմուտ, փտութիւններով, դարշահոտութիւններով, շնչարդելութիւնով, մահով լի ծահիճ էր ներկայացնում... Կենդանացնող հոսանք էր հարկաւոր և այդ պատրաստ էր իտալական իդէայի մէջ... Եկան մարդիկ—Վարեզէ և Կալատաֆիմին և բաց արին սահանափակները. հոսանքը սլացաւ դէպի ծահիճ և հէնց այնտեղից, ուր բորբոս էր դրել բուրբոնականութիւնը, յայտնեց մեզ համար ազատութիւն (ծափահարութիւններ): Բայց ազատ հոսանքը այստեղ էլ իրանից յետ թողեց աւազ, քարեր, ամեն տեսակ անպէտք բաներ—դրանք երեկւայ և այս առաւօտայ ազատամիտներն են, ազատամիտներ իրանց որկորի համար (ուղիղ է...): Այժմ կզայ ջրաբաշխը և այդ բոլորը կարգի կդնէ»:

Բայց որպէսզի այդ կարգաւորութիւնը կարելի և յարմար լինի, Գալացիին բոլոր Նէպոլիտանցիներից պահանջում է գործին անկեղծօրէն օժան-

դակել: «Իմացէք—ասում է նա—հայրենիքը երգերով, օրհներգներով, ոտանաւորներով, սօնակատարութիւններով, հրավառութիւններով չէ վերածնուում, այլ դրան հիմք է դրուում անձնագործութեամբ, իւրաքանչիւրի և բոլորի անձնւիրութեան միաւորութեամբ, որովհետեւ իւրաքանչիւրը նպաստում է այն բանի իրադործման, ինչ որ բոլորն են ցանկանում»: Իր միտքը պարզաբանելով, այնուհետեւ Գալացիին սաստիկ և կծու յարձակում է այն ազատամիտների վրա, որոնք միայն նոր կառավարութեան մէջ տեղ ստանալ են աշխատում և երբ չեն կարողանում իրանց նպատակին հասնել, նոր կառավարութիւնից անբաւական են ձեւանում և մինչև անգամ անկեղծ հայրենասէրներին ծանապարհից շեղում են: Նա երկար ապացուցանում է այն բնական երեւոյթը, որ չէր կարելի դարաւոր չարիքը մի անգամից, մի քանի օրւայ ընթացքում ոչնչացնել: Բայց միջոց ունենալ արդէն Նէպոլին տրւած վերանորոգումները սկսել, միւլնոյն ժամանակ Բուրբոններից ազատ լինել, մի մեծ զիւտ է համարում: Այնուհետեւ խօսում է նրանց մասին, որոնք անբաւական են նախկին բուրբոնական աստիճանաւորներից շատերի պաշտօններում քնալու համար:

Այստեղ Գալացիին բուրբոնականներին երեք կարգի է բաժանում՝ դահիճ—բուրբոնականներ, ինչպէս նա է անւանում, դրանց անշուշտ հարկաւոր է հասարակաց դատարանին ենթարկել և դրանք ոչ մի խղճահարութեան արժանի չեն: Չափաւոր—բուրբոնականներ, որոնք ջերմեռանդութեամբ

կատարում էին Բուլբոնների հրամանները. դրանց հարկաւոր է գործից հեռացնել, եթէ աչքի ընկնող տեղեր բռնում լինէին, բայց ոչ թէ հետամուտ լինել: Երրորդ՝ անտարբեր—բուլբոնականներ, դրանց ձեռ տալ հարկ չկայ: Գավազցին իր միտքը այսպէս է բացատրում. «Իրանք ծառայում էին դիւանատներում, ատեաններում, չնչին պաշտօններում, գրում էին, ինչ որ պատւիրւում էր և ոչ մի բանում մեղ չունէին, որովհետև արտադրողի գրիչը դատողութիւն չունի, նրան է պատկանում, ով վարձ է տալիս: Եթէ դրանք Բուլբոններն են, նա գրում է. «Կեցցեն Բուլբոնները»): Եթէ Գարիբալդին է՝ «Կեցցէ Գարիբալդին»): Հետևապէս՝ հարկ չկայ դրանցով զբաղւելը՝ այդպիսիներն ամեն երկրում էլ բազմութիւ են և եթէ կառավարութիւնը փոխւելիս, ամեն անգամ դրանց էլ բոլորին փոխէին, այն ժամանակ շատերին կանրագրացնէինք և սրա հետ միասին ամեն անգամ գործի ընթացքում ընդհատուած և ջրփոթմունք կառաջացնէինք: Ահա Ամերիկայում ամեն չորս տարուց յետ կառավարութիւնը փոխւում է, ի՞նչ են անում աստիճանաւորներին: Բոլոր անկախ և ծանրակշիռ պաշտօններում նշանակւում են նոր կառավարութեան հաւատարիմ մարդիկ, միւսներին չեն դիպչում, որովհետև նրանք այն կանեն, ինչ որ կհրամայւի...» Բայց Գավազցին աւելի սաստիկ վրդովւում է այն մարդոց դէմ, որոնք «Սեպտեմբերի 5-ին Պիետիգրոտա էին վազում Բոմբիչելլօի ետեից, նրա հետ այնտեղ Մադոնայի առաջ ողբալու, իսկ Գարիբալդին մուտ

գործելիս, Նէպոլ էին վազում «Viva Garibaldi» աղաղակելով...» Այդ անձերի դէմ գրգռում է հասարակական զայրոյթը, նրանց համարում է ամենազլիաւոր անյարմարութիւններից մէկը, որ մնացել է «Ճահիճը մաքրելուց յետ»): «Հաւատալ չեմ կարող—ասում է նա—երբ տեսնում եմ ահա այս եկեղեցին ազգային դրօշակներով զարդարւած. կամ երբ պատահում եմ փողոցում այնպիսի մարդու, որի յայտնի ձեւի բեխերը դեռ մի վերստից յայտնում են նրա նախկին ոստիկան լինելը. բայց միևնոյն ժամանակ եռադոյն կակարդ է կրում... (ժողովուրդը ծափահարում է): Իսկական ազատամիտը ցուցամով չպիտի լինի, իր կակարդը չպէտք է ցոյց տայ, նրան առանց այն էլ կձանաչեն և հաւատացէք, որքան մէկի կակարդը մեծ է, այնքան նրա սէրը դէպի ազատութիւն փոքր է»):

Այնուհետև Իտալիայի բոլոր առաջաւոր մարդկանց տեսութեան համեմատ՝ Գավազցին խօսում է Պիետմոնտի հետ միանալու մասին, որի համար խորհուրդ է տալիս ավտոնոմիա (անկախութիւն) կազմելու մտածումները թողնել և մինչև անգամ այս նւազ զօհել հասարակապետական տենդենցիաները. «հասարակապետութիւն—բացականչում է նա—բայց ո՞ւր են հասարակապետականները: հասարակապետականներին ստեղծողը հասարակապետութիւնը չէ, այդ դրանք են հասարակապետութիւն կազմակերպում... Բայց անկեղծ, սրտով հոգևով, սխրագործութիւնով, զոհաբերութիւնով հասարակապետական, խիստ առաքինի և համեստ պահանջներով

հասարակապետական, ես միայն մէկը գիտեմ, դա — Յովսէփ Գարիբալդին է... Իսկ Յովսէփ Գարիբալդին, հասարակապետութիւն չէ ցանկանում...»

Այնուհետեւ շարունակելով բոլորին համոզել, որ միութիւնը անհրաժեշտ է Իտալիայի ապահովութեան և ոյժի համար, Գալֆանցին ճառը ամփոփում է, խոստանալով միւս օրը աւելի մանրամասն խօսել Իտալիայի թագաւորութեան նեւ միանալու ձևի մասին և վերջացնում է կեցցէներով Գարիբալդուն և Բուրբոնների դէմ բացականչութիւններով: Ժողովուրդը զրաւուած նրա խօսքերով, բռնկւում է կատաղի աղաղակներով, որոնք քարոզելը ամբիոնը թողնելուց յետ դեռ երկար շարունակւում են:

Գալֆանցու երրորդ քարոզը նւիրւած է Պիեմոնտի հետ շուտափոյթ և անպայման միանալու մտքերին և թէ՛ ինչպէս պէտք է միշտ զգոյշ կենանք բէակցիայից: Այս քարոզի մէջ երևում է Գալֆանցու անվստահութիւնը տուրինեան նախաբարութեան մասին (որ իսկապէս հէնց այդ օրերը աշխատում էր մի որևիցէ կերպով Գարիբալդու առաջն առնել) և վստահութիւն է յայտնում, որ հնար եղածին չափ, Գարիբալդու կառավարութիւնը ամեն կողմնակի ազդեցութիւնից կարող է աւելի անկախ լինել Նէպոլում: Նա այդ առանձնապէս արտայայտում է, բնորոշելու քաղաքագէտների վարմունքը և խօսելու Սենտ-Էլմո ամրոցը աւերելու մասին: Երրորդ քարոզից հէնց միայն այդ երկու կտորը մէջ կբերենք, քանի որ քարոզչի

բնաւորութիւնն ու ձևը արդէն մեզ յայտնի է, իսկ քարոզչի միւս մասերը իրանց տեսակով սոսկ տեղական և պատահական ինտերես ունին:

«Իմ բարեկամներ, պէտք է շատ ցանկալ—ասում է Գալֆանցին — որ ոչ ոք հանդէս չգար մեր գործը խափանելու: Գարիբալդու յաջողութիւնները այնքան մեծ են, որ քաղաքականութիւնը այդ մասին չէ կարող անհանդստանալ, Բայց վախում եմ անստամ, պառաւ դայեակից, որին քաղաքականութիւն են անւանում: Վախում եմ, որ նա այստեղ ամեն բան չախտոտէր. ինքներդ դատեցէ՛ք, որքան նա չարամիտ է: Անցեալ տարի միջին Իտալիայում մենք ցանկանում էինք հէնց ինչպէ՛ միանալ, որովհետեւ վախում էինք ժամանակ կորցնել, որ մի դուրս չէ չաջողէր Վիկտոր Էմմանուէլին մեզ թագաւոր ունենալ: Քաղաքականութիւնը այդ տեսնելով, երկարացնում, ձգձգում էր գործը և մեզ ստիպեց միութեանը սպասել 1859 թւի ապրիլի 27 ից մինչև 1860 թւի մարտի 18ը: Ահա թէ ինչպէս էր գործում մեզ համար այդ պառաւ քաղաքականութիւնը... Յոյս ունէր, որ կձանձրանանք, աչքի ընկնող որևէ յանցանք կգործենք, որևէ սխալ կանենք, որ կարողանար հասարակական կարգը խանդարել և միջոց տալ իրան՝ քաղաքականութեանը խառնուել և գործերը հին ձևով վարել:

«Բայց բաղդի բերմամբ, արդէն մենք ծանօթ էինք այդ պառաւի հետ և ասացինք նրան. — հեռացի՛ր. զոթական խորամանկութիւններիցդ և ոչ մէկը հասկանալ չենք ուզում»: Եւ մենք ստեղծե-

ցինք Իտալիա և միութիւն համբերութեամբ, խաղաղ և կարգով... Իսկ այստեղ և Սիցիլիայում քաղաքականութիւնը հակառակն է գործում: Նա աշխատում է առանց յապաղման միացնել ժողովուրդին, որովհետեւ դիտէ, որ եթէ ժողովուրդը համաձայնւի միանալ, այն էլ իսկոյն, այն ժամանակ յեղափոխութիւնը ներկայ սահմանից հեռու չի անցնի և հետեւապէս՝ Իտալիան ղի Տիանայ...

«Բարեկամներ, միայն յեղափոխութիւնը կարող է «Իտալիա ստեղծել», իսկ քաղաքականութիւնը՝ երբէք: Եթէ յեղափոխութիւնը Իտալիա կստեղծի, քաղաքականութիւնը կստիպւի այդ ընդունել, որպէս կատարած մի փաստ. բայց եթէ Իտալիա չստեղծենք, քաղաքականութիւնը միւս անգամ ևս մեզ կբաժանէ և թող չի տայ, որ Միացեալ Իտալիա լինի, որովհետեւ դրանից սաստիկ վախում է... (Ճիշտ, բրաւ): Ուրեմն՝ այդպէս Գարիբալդու և քաղաքականութեան մէջ մեծ անդունդ կայ... Գարիբալդին մեր քաջայաղթ յեղափոխութիւնն է ներկայացնում, որ նշանակում է ժողովուրդի իրաւունքների վերականգնումն տիրապետողների չարագործութեանց դէմ: Իսկ քաղաքականութիւն նշանակում է—իշխանների և թագաւորի իրաւունքների վերականգնումն, ժողովուրդի իրաւունքների դէմ... (հասնութեան միասիրտ աղաղակներ ժողովուրդի մէջ):

«Ի նկատի առէք—ահա թէ ինչո՞ւ մինչև այդ աստիճան ընդլայնում եմ յեղափոխական հարցի քնքշութեան մասին, ահա՛ թէ ինչո՞ւ կասկածելի է երևում ինձ մինչև անգամ պիեմոնտեան զնդի մեզ

մօտ դալը: Այդ զնդերը, որոնք ամեն տեղ ցանկալի են և ուրախութեամբ են ընդունւում, դրանց այս բողոքի այստեղ լինելը պիեմոնտեան քաղաքականութեանը հակառակ է, այն քաղաքականութեան, որ Միջին Իտալիային է վերաբերւում: Երբ այնտեղ միութեան գործը սկսեց արագ առաջ գնալ, Վիկտոր էմմանուէլը իր արքայական կոմիսարներին Ճլորենցիայից, Բոլոնիայից, Պարմայից յետ կանչեց, որպէսզի չասէին թէ միութիւնը արքայական կոմիսարների խորհրդով, պահանջելով կայացաւ... Այժմ կարելի բան է, որ քաղաքականութիւնը չասէ թէ՛ «Նէպոլիտանցիները միութիւն ստաջարկեցին, որովհետեւ Նէպոլում Պիեմոնտեան բազմութիւ զնդեր կային»: Ի հարկէ, այդ իրաւունք կտար մտածելու, որ այստեղ որևէ ստիպմունք, ճնշումն է եղել, այն ինչ մենք ազատ լինել ենք ցանկանում, իսկապէս և ազատ ենք, քանի որ միանալու ցանկութիւնը վզներին ոչ ոք չէ փաթաթել: Դեռ մինչև Գարիբալդու գալը Նէպոլիցիները այդ ցանկութիւնը ունէին և այժմ էլ ունին իրանց ժողովուրդական թագաւորող կամքով»

Այդ քարոզով ժողովուրդին բէակցիայից զզուշացնելով, Գալացցին պահանջում էր քանդել Սէնդ-Էլմօ, Castello del Carmine և Castello del Novo ամրոցները: Ապացուցանելով, որ դրանք չեն կարողանում բաւարարութիւն տալ քաղաքը պաշտպանելու գործում և մասնացոյց անելով Անգլիայի վրա, որ նրանք յոյս են դնում ոչ թէ ամրոցների, այլ նաւերի վրա, Գալացցին խորհուրդ է տալիս

հէնց իսկոյն մի հասցէ ներկայացնել զիկանստորին, որով և պահանջել—ամրոցները դատարկել և քանդելու թողաւ թիւն առ: Այս խորհուրդը կատարելու համոզելով ժողովուրդին, Գալացցիին ասում է.

«Մի մտապէք, ինչ որ ձեզ ասում է Բոլոնիայի վանականը, որ աքսորից միայն նոր է վերադարձել. ուստի ձեզ է դառնում հասարակ, բայց զործնական ճառով, առանց պերճախօսութեան, առանց բանաստեղծութեան, անոյժ, բայց զործնական... Եթէ այդ ամրոցները Գարիբալդու զիկատարութեան օրով չկործանէք, ուրիշ ժամանակ երբէք չէք կործանի: Եւ զիաէք ինչու—Որովհետեւ միութիւնից յետ զինւորական իշխանութիւնը դրանց տէր կդառնայ և այս ու այն պատճառով կպաշտպանի, այնպէս, որ այդ սպառնալիքը, կաշմարտնից միշտ ձեր գլխին կանգնած կլինի: Զինւորական ոյժի համար այդ ամրութիւնը նոյն է, ինչ որ անեկդոտի հաւը, որ օրը Ուրբաթ զիւղական տէրտէրի բազն է մտել: Հաւին տեսնելով, քահանան բացականչում է. «Ո՛ւՖ, ի՛նչ չաղն է ու հիանալի. դա ինձ համար այսօր մի սիրուն ծառ կլինի»:
— Բայց հայր սուրբ, այսօր Ուրբաթ է: — Ուրբաթ է. և տէրտէրը սկսում է իր ամբողջ աստուածաբանութիւնը քրքրել (ծիծաղ) ու ասում է ինքնիրան.
«Եթէ Աստուած հաւ է ուղարկել բազս, նշանակում է՝ նա ցանկանում է, որ ես հաւ ուտեմ. եթէ այսօր է ուղարկել, երբ իշտահս սարսափելի լաւ է, այդ նշան է, որ պէտք է այսօր ուտեմ: Բայց այսօր Ուրբաթ է, նշանակում է, Աստուած կամենում է, որ

Ուրբաթ օրը ուտեմ: ուրեմն թող Աստուծոյ կամքը լինի»:
Նոյն տեսակ է դատում և զինւորական վարչութիւնը ամրութիւնների վերաբերեալ»

Այնուհետեւ մի քանի օրինակներ բերելով Բրեշի, Ֆերրարի, Պերուջիի, Գինուայի ամրութիւնները կործանելու մասին, քարոզի վերջը Գալացցիին կատարի ծափահարութիւնների առիթ է տալիս և կարծեմ այդ ճառից անմիջապէս յետոյ Նէապօլիտանցիները իսկապէս շտապում են Գարիբալդու մօտ, խնդրելով—կործանել ամրոցը: Ի յաւսրախ, Գարիբալդին մի ինչ որ պատճառով այդ բանը անյարմար զտաւ և հանգստացրեց ժողովուրդին հետեւեալ խոստումով—այսօրեանից Սէնա-էլ-մօն մշտապէս կյանանի Նէապօլի ազգային հեծելազնիւն: Եւ երբ միութիւնը կայացաւ, ինչպէս Գալացցիին նախատեսել էր, ժողովուրդը իր պահանջը նորոգելու այլ ևս մի օրէէ յաջող դէպք չունեցաւ և Սէնա-էլ-մօն, այնքան մեծ սարսափների կօթողը, այնքան բազմաթիւ իտալական նահատակների բանար և կառափատեղին, մինչև օրս բարձր կանգնած է Նէապօլի գլխին և կարծես սպառնում է նրա նորածին ազատութեանը:

Գալացցու տպագրւած ճառերից չորրորդը աչքի է ընկնում իր՝ աւելի ժողովուրդական բնաւորութեամբ, որ թարգամանաբար անկարելի է հաղորդել: Բայց և այնպէս՝ նրա մէջ կրկնւում է, մեծ մասամբ, առաջին քարոզների նիւթը՝ միայն մի քանի առարկաների վրա աւելի է կանգ առնում, քան առաջին ճառերում: Նա բաւական արտասովոր

կերպով սկսեց: Երեկոյ էր, del Palazzo-ի Տրապա-
րակում, իսկ և իսկ Կարոլոս III ի և Ֆերդինանդ
I ի արձանների մէջտեղում, որոնք զրուած էին San
Francesco di Paolo եկեղեցու առաջ: Արդէն ամ-
բոխը սպասում էր Գավազցուն և նրա յայտնելը
ողջունեց ծափահարութիւններով: Նա վեր ելաւ
բարձրութեան վրա, աջ ու ձախ նայեց, զլուխ
աւեց լուսնի լուսով փայլող արձաններին և բարձր
ծիծաղեց, այնուհետեւ սասկաւ առ տակաւ աւելի
սառը դիրք ընդունեց և սկսեց նէպաօլիտանցիներ
ին համոզել որ ներքին համաձայնութիւն պահպա-
նեն և հին ըէակցիայի փորձերին արիաբար դիմադ-
րեն: Ի թիւս այն միջոցների, որ Գավազցին առա-
ջարկում էր ժողովրդի մէջ բարերար սկզբունքներ
արմատացնելու համար, ամենաառաջին տեղը կա-
նանց մասնակցութեան է տալիս, ուստի սարսափե-
լի կերպով յարձակում է վանական, մեռած և սնա-
պաշտական կրթութեան դէմ, որ կանայք ստա-
նում էին Նէպաօլում: Վերջապէս՝ նոյն իսկ հոգեո-
րականութեանն է դառնում:

«Ինչ վերաբերում է կղերին, թող ինձ իր բա-
րեկամ ընդունի, աւելի հէնց այն խիստ և անկեղծ
յանդիմանութիւններիս համար, որ նրանց անում
եմ, փոխանակ շողջորթելու... Արդէն ասել եմ,
որ նէպաօլիտանական հոգեորականութիւնը մեծ
մասամբ միանդամայն պէտք է փոխի: Յարակցե-
լով պատմական ճերունու խօսքերը, կասեմ նրան.
— Կղեր, պէտք է դու ոչնչութեանդ անդունդից
յարութիւն առնես: Մի՛ մոռանար կղեր, որ Բուր-

բոններին սպասաւորելիս, դու քեզ թոյլ տւիր խայ-
տառակութեան, անպատուութեան, անէծքի ամենա-
խաւար անդունդները նետել: Դուրս եկ այդ տղմից,
վեր կաց, յարութիւն առ նոր Իտալիայի շունչ
առնելովը և իտալական ազատամտութեան ճաճանչ-
ներից զլսիդ պսակ հիւսիբ (ծափահարութիւններ):
մեր կղերը միայն այդպէս օտքի կկանգնի:

«Բայց որպէսզի կղերը ինքնիրան չանպատէ,
միենոյն ժամանակ աշխատելուց փախուստ տւած
լինի, ասում է. «Ես քաղաքական գործերում չեմ
խառնում, չեմ կարող այդ աշխարհական գործերի
մէջ մտուք գործեր»... Բայց մինչև այժմ դուք
չա՛նց Դ՞ուք պարսպում էիք դրանցով. արդե՞՞ք մի
հնար չէք գտնի այժմ էլ ճի՞ փոք պարսպել: Բայց
ոչ. մինչև անգամ չեմ էլ պահանջում, որ պարսպէք:
Չեմ ասում ամբիոն բարձրացէք, այնտեղից քաղա-
քա-տնտեսութեան, քաղաքապիտուութեան, Իտալիան
վերաստեղծելու միջոցների մասին խօսեցէք: Ո՛չ
այդ չեմ պահանջում. այլ ասում եմ—կղեր, նախ
քան ըէակցիա կազմելը, որի ոգորմութեամբ շատ
քահանաներ և վանականներ բանտերում նստած են,
նախ քան Բուրբոնների օգտին քարոզելը, առանց
քաղաքականութեան մէջ խառնելու, խօսայէք
համաձայնութեան, եղբայրութեան, սիրոյ մասին,
խօսայէք Աւետարանի մասին (ծափահարութիւն-
ներ): Աւետարանը մեր կողմն է, մեր հետն է: Աւե-
տարանը Իտալիայի կողմն է և ոչ նրա հակառակ,
ուրեմն՝ խօսեցէք Աւետարանի մասին, Եւ եթէ
այլ ևս ասելիք չունէք, խօսեցէք հայրենիքի մա-

սին. այդ սէրը Քրիստոսն է սրբագործել. նա է փառաբանել և օրհնաբանել... Այդպիսով կարելի է ընկած հեղինակութիւնը ուղղել և հասարակաց կարծիքը դէպի ձեզ արամադրել: Եւ թող ապագայում քահանային պատահելիս, երեսներին խաչ չհանեն, որպէս թէ սատանային են պատահում, այլ ժպտան նրան որպէս բարեկամի»:

Ճառի վերջում Գալացցին իր նեռեւեալ քարոզի համար ժամանակ է նշանակում Սուրբ Եանվարի օրը, երբ արդէն հրաշքը գործւած էր: Այդ նրան առիթ է տալիս հոգևորականութեան դիմելու.

«Ի դէպ, նէապօլում լուրեր են տարածում, եւ այդ գիտեմ, այո՛, լուրեր են տարածում, իբրև թէ Սուրբ Եանվարին հրաշք չէ գործելու *): Մակայն Սուրբ Ջեննարօն հրաշք կգործի, որովհետև Սուրբ Ջեննարօն, 1799 թւին բարի եակորեան էր, 1860 թւին փառաւոր դարիբալդիական կլինի (ճափահարութիւններ): համոզւած եմ, որ Սուրբ Ջեննարօն գործեր վարել աւելի լաւ գիտէ, քան նէա-

*) Հրաշքի չկատարելը երկնային բարկութիւն (Սուրբ Ջեննարօի արեան հեղուկ գառնալը) կհամարէր և կարող էր նշանաւոր անկարգութիւններ յարուցանել: Գեո 1799 թւին հոգևորականութիւնը այդ հրաշքը գործել չէր կամենում, երբ Շամպիօնէն Ալէապօլ մտաւ, որ և խոստացաւ արքեպիսկոպոսին կախել, եթէ քառորդ ժամից այդ հրաշքը չկատարւի—և հրաշքը կատարւեցաւ:

Գալացցու խօսակցական ոճով գրաւուել պէտք չէր. Ալէապօլիտանցիք առհասարակ սիրում են իրանց սրբերի հետ վարել ինչպէս մտերիմների հետ:

պօլիտանեան արքեպիսկոպոսը (ճիծաղ): Բայց և այնպէս՝ լուրեր են տարածում, որ այլ ևս հրաշք չինելու չէ. իսկ եթէ չլինի էլ, յուսով եմ, որ դրանով երկինքը չի խորտակւի և մենք առանց հրաշքի էլ Քրիստոսի միջնորդութեամբ փրկւած՝ Աստուծոյ որդիք կլինենք: Յոյս ունիմ... բայց (աշխարհականներ դուք մի լսէք, հոգևորականներին եմ ասում) նայեցէ՛ք, որ հրաշքի անյաջողութեան դէպքում Գարիբալդին ևս Փրանսիական հռչակաւոր զօրապետի օրինակին չհետևի, որ սուրբին ստիպեց տասնուհինգ բոպէում իր հրաշքը կատարել... և նայեցէ՛ք, որ Իտալիան և Եւրոպան չհետևեցնեն, թէ Սուրբ Ջեննարօն հրաշքը գործում է միայն այն ժամին, երբ հոգևորականներին ցանկալի է (ճափահարութիւններ): Ինքնախաբէութեամբ կարծում եմ, որ մի որևէ լրտես խօսքերս կհասցնի Նորին Բարձրութեան—Կարդինալին և հետևանքը այն կլինի, որ այդ նորին բարձրութիւնը կբարեհաճի Սուրբ Ջեննարօի հրաշքը մեզ պարգևել (ճիծաղ)... Ծաղրածուններ... Երբակի ծաղրածուններ... Ժողովուրդը հաւատ է խնդրում, ոչ թէ քահանաների ինքնախաբէութիւն: Վերջապէս պարօններ, խիզ՝ ունեցէք և մեզ մի՛ հաւատացրէք, որ Աստուած ձեր հրամանով հրաշքներ է գործում»:

Սեպտեմբերի 19-ի երեկոյեան Գալացցին գարձեալ նոյն սեղում քարոզեց ու շատ զովաբանեց Սուրբ Ջեննարօին, մինչև անգամ նրան «galantuomo» անւանեց, որովհետև իր սովորական հրաշքը նոյնութեամբ կատարեց... Նա այնուհետև Իտալիայի

ազատութեան նկարագիրն արեց, խրախուսեց առանց վհատելու շարունակել գործը, նորից վաս քահանաների, եկեղեցական ատեանների և բանտերի դէմ յարձակեց, որոնք նէապօլում վերականգնւեցան Վոնկորպասի *) զօրութեամբ և հարց էր բարձրացնում հոգատարութեան տներ և մանկական ապաստարաններ հիմնել նէապօլում:

Նա այնուհետև դարձեալ մի քանի անգամ եղւիտների դէմ քարոզեց, որոնց արտաքսելը արդէն վճռուած էր յօղուտ միութեան: Իւրաքանչիւր անգամ բերկրալէ ընդունելութիւն էին անում նրան, իւրաքանչիւր անգամ էլ նրա քարոզի նիւթը կենսական էր և ժողովրդի կացութեան յարմար ու շատ կամ փոքր՝ շօշափելի գործնական հետեանքներով էր վերջանում:

Հայր Գավազցին իր քարոզչական գործունէութեան միջոցին միանգամայն բացառիկ դիրք ուներ նէապօլում, որի մասին ընթերցողներին մտածմբ հաղորդեցինք: Անհեթեթութիւն կլինէր օրինակ համարել նրան միւս կաթոլիկ քարոզիչների համար, բայց միւս կողմիցն էլ չէ կարելի այն յանդիմանութիւնների հետ ճամաձայնելը որ անում է նա նէապօլիտանեան հոգևորականութեանը: Յիրաւի այդ հոգևորականութիւնը իրան ստորացնում էր և իր դէմ յարուցանում էր ընդհանուրի կարծիքը նրանով, որ չէր կամենում նոր շարժումները հասկանալ և

*) Կրօնական գործերին վերաբերեալ պայմանագիր պապի և թագաւորի մէջ:

մասնակցութիւն ունենալ: Հարաւային Իտալիայի հոգևորականութիւնը (նէապօլիտանեան և հռովմէական կալւածներում) աչքի է ընկնում իր ազիտութիւնով և ամենամեղսական հակումներով: Ամուրի լինելու պատճառով, հազլազիւտ է տեսնել այստեղ մի հոգևորական, որ խառը չլինի որեէ կանայի խայտառակ պատմութեան մէջ և մինչև անգամ ոչ միայն կանայի, այլ... բացի սրանից նրանց բոլորին, մանաւանդ՝ քանի մի կուսակրօն միաբանութիւններին, մեղադրում են դէպի դրամը ունեցած սաստիկ ազանութեան համար: Ամուսնացած հոգևորականութիւնն էլ իր հեշտասիրութեան և չափից դուրս շատակերութեան համար ամեն տեղ յանդիմանութիւնների է ենթարկուած... Կարդինալների, վանականների, հոգևոր հայրերի (patre confessore) մասին անթիւ անեկգօտաներ կան ամբողջ Իտալիայում: Նրանց մասին ամեն քայլափոխում պատահում է լսել ամենասուր փոխաբերութիւններ, ամենավիրաւորական սրախօսութիւններ և առածներ: Հաւատալ դժւար է, որ այդպէս սնոսխապաշտ հոգևորականները, այդպէս երկիւղ կրող ժողովուրդը, միաժամանակ այդպէս ծաղրէր նրան, թէև հոգևորականութիւնը իրան այդ գրութեան հասցնել կարողացաւ Իտալիայում: հռովմում նրանց ատում են, բայց իհարկէ նրանցից վախում են, որովհետև նրանք միևնոյն ժամանակ երկրի իշխաններն են: նէապօլում էլ նրանցից վախում էին, որովհետև Բուրբոնների հովանաւորութիւնն էին վայելում և ստէպ, ինչպէս հաստատում են, հոգևորա-

կանութիւնը խուզարկութիւնների ժամանակ օդ-
նում էր ոստիկանութեանը, խոստովանութեան
դադանիքը յայտնելով: Հեռեապէս՝ հոգեորականու-
թիւնը այստեղ ևս մի որոշ չափով ոյժ էր ներկա-
յայնուս, իշխանաւոր էր, կարող էր բանտով սպառ-
նալ և իր սպառնալիքը իրագործել. կարող էր և
մեծարանքների ճանապարհ բանալ: Դրա համար էլ
հոգեորականութիւնը ժողովրդի սէրը վաստակելու
չարժանացաւ և աւելի վերջին ժամանակները— Բուր-
բոնների տիրապետութեան օրով և ընդհանուր
կարծիքի առաջ ընկաւ: Նա իր ինչ դրութեան լի-
նելը չհասկացաւ և չկարողացաւ ժամանակին
սթափուել...

Դեռ Գարիբալդու գալուց շատ առաջ ազա-
տամիտ ուղղութիւնը Նէապոլում աննկատելի կեր-
պով մեծանում, զօրեղանում էր, բայց Ֆրանչիսկօի
կառավարութիւնը այդ բանին որոշ նշանակութիւն
չէր կամենում տալ և ենթադրում էր, որ կարելի է
գործը մի քանի բանտարկութիւններով և սպանու-
թիւններով վերջացնել: Լիովին այդ համոզմունքի
էր և Նէապոլիտանեան հոգեորականութիւնը: Նա
նոր գաղափարների յաղթանակին չէր սպասում և
չարունակում էր Բուրբոնեան կառավարութեան
վրա յենւել և յոյց էր տալիս նրանց իր ջերմեռան-
դութիւնը: Ճիշտ է, որ կղերին Բուրբոնների հետ
կապողը սկզբունքների և ձգտումների միատեսա-
կութիւնն էր, ուստի Բուրբոնների հակառակորդ-
ները, գործի իսկական տեսակէտից, արդէն թշնա-
մի էին նաև հոգեորականութեան, մանաւանդ կու-

տակրօն միաբաններին: Սակայն շատ կարելի է, այդ
կարգինալները, արբաները Բուրբոններին աւելի
փոքր ջերմեռանդութեամբ կվերաբերուէին, եթէ
դրանց վերջնական անկումը նախատեսէին. դուցէ
այն ժամանակ, շատ կարելի է, շա՛տնց Գոթա քա-
ղաքականութեամբ չպարապէին, ինչպէս ասում է
Գալպացին: Այն ինչ՝ ներկայուած նրանք իրանց հո-
վանաւորողներին հաւատարիմ մնալով, սկսել են
ամենաժողովրդական քարոզներ ասել: Առաջ նրանց
քարոզները ուղղակի անպտուղ, մեռած բաներ էին,
կաթոլիկ եկեղեցու սրբութեան, հոգեկան կատարե-
լութեան և այլ սրանց նման բաների մասին էին
խօսում: Բայց այժմ իրանց քարոզները սկսել են
լցնել ակնարկներով և ուղղակի յոյցերով Իտալա-
կան շարժումների, Գարիբալդու, Վիկտոր Էմմա-
նուէլի և այլոց դէմ: Ի հարկէ, ինքնըստինքեան
նրանց կողմից այդ սխալ հաշիւ էր, որովհետև
շինծու յորդորները ոչ սքի վրա չէին ազդում, այլ
գուցէ մարդոց մտքերը քարոզիչների դէմ գրգռում
էին: Հէնց այս բանում առանձնապէս հասարակաց
կարծիքի առաջ իրանց վրա դրոշմեցին այն ամօ-
թաբեր բիծը, որ անկեղծ հայրենասիրութեամբ
սրբել համոզում է Գալպացին:

Սղերաբան լրագիրները Գալպացու վրա խիստ
յորձակում էին. էլ չեմ խօսում հոովմէական պա-
լաւի արգելումների և խուզարկումների մասին:
Հայր Գալպացու քարոզական գործունէութիւնը
պատուեցին անիշխանական ազիտատորութիւն անու-
նով և ոչ միայն քրտոնէութեան, այլ և ամեն

կրօնի հակառակ մի բան էին համարում: Նրա քարոզները մասին մեր բերած ամփոփ ակնարկից երևում է, թէ որ աստիճան ուղիղ են այդ մեղադրանքները: Ճիշտ է, կաթոլիկ եկեղեցու իսկական քարոզիչներից Գավալային զանազանում է իր խօսակցութեան նիւթով ժողովրդի հետ—նա խիստ յարձակում է Բուրբոնեան կառավարութեան վրա, յարձակում է հոգևորականների սարկութեան և եսասիրութեան վրա, աղջիկների վանական դաստիարակութեան՝ մանաւանդ՝ պապի մարմնաւոր իշխանութեան վրա. նա ծիծաղում է Սուրբ Ջեննարօի արեան կեղծ իրաշարժութեան վրա, փառաբանում եկեղեցուց անջատած Գարիբալդուն և նրա կամաւորներին և այլն:

Բայց եթէ քրիստոնէութիւնը իր իսկական մտքով վերցնենք, առանց այն աւելորդութիւնների և այլանդակութիւնների, որին ենթարկել է հռովմկաթոլիկական եկեղեցին, Գավալային աւելի մօտ կլինի նրան, քան կարդինալներն ու արքաները, ինչպէս գաւանանքին վերաբերեալ, այնպէս էլ այդ ամբողջ վարդապետութեան բուն հոգուն: Օրինակ. Գավալային հոգևորականների չամուսնանալը պարտաւորական չէ ընդունում: Այն մեղադրանքներն, որ նա ամուսնացած է, մի անգամ ժողովրդին քարոզելիս, հրապարակաւ պատասխանեց. «Այդ մեղք չէի համարի և խոստովանել չէի վախենայ, եթէ ուղիղ լինէր. բայց ամուսնացած չեմ, որովհետեւ մի սէր, մի կին ունեմ, այդ՝ Իսաղիան է»: Մենք զիտենք, որ Գավալային այս հարցում աւելի

ճշմարիտ է, քան հռովմէական պալատը: Նոյն է և պապի մարմնաւոր իշխանութեան վերաբերեալ հարցում: Բայց զլսաւորն այն է, որ իր քարոզի բուն հոգևով նա աւելի մօտ է Աւետարանի գաղափարին, քան հռովմէական պալատը և իր սպասարկուները: հռովմէական հոգևորականութիւնը իր մարմնաւոր իշխանութիւնը ընդլայնելու վերաբերեալ, տերութիւնների հետ մօտ յարաբերութեան մէջ մտաւ և այժմ այնպիսի հանգամանքների մէջ է դրւած, որ պարտաւոր է իր բոլոր ոյժերը գործադրել ոչ թէ ժողովրդի օգտին, այլ նրա դէմ և բոլոր այն հանգամանքներում, որտեղ ժողովրդի և պետական շահերի ընդհարումն է առաջանում: Կաթոլիկ երկիրներում այդ շատ յաճախ եղել է և լինում է, օրինակ. նէապօլում ժողովուրդը ճնշումի, ամենախիստ անարդարութիւնների էր ենթարկւում անդադար, աստիճանաւորների քմահաճութեան և կաշառակերութեան, հողատէրերի ազահութեան և ոստիկանութեան կասկածների ծանրութեան տակ տանջւում էր: Ի հարկէ, հոգևորականութեան զործն էր, Քրիստոսի օրէնքին համաձայն, հալածեալներին պաշտպանել, անմեղի մասին ճշմարիտ խօսք տակ, խայտառակել զժողովն, բայց հոգևորականութիւնը այդ մասին չէր մտածում: Ընդհակառակն՝ իր ամբողջ ոյժը Բուրբոնների հովանաւորութեան և յայտնի անձերի վրա հիմնելով, հոգևորականութիւնը ստիպւած՝ անարդարութեան, կամայականութեան, բռնաբարութեան պաշտպան էր հանդիսանում: Նա հոգևոր միջոցներով օգնում էր ոստիկանական խու-

զարկութիւններին, խառնակում էր ժողովրդի միա-
քը, միայն ժողովրդի անարգութեան, ոչնչութեան
մասին խօսելով և ամեն ստորութիւնների ուղիղ,
իրաւացի լինելը համոզելով, որ մտածում էին մի
որեւիցէ Դելիարէաս, մանիսկալիս, Սյոսսօ և այլ
անխիղճ, կատաղի Երկու Սիցիլեայի սանովները:
Սյսպէս՝ ՚ի դէմս իր նէպօլեանական ներկայա-
ցուցիչներին՝ եկեղեցին միանգամայն շեղեց քրիս-
տոնէութեան վարդապետութեան գաղափարից և
ոչ թէ ճշմարտութեան, եղբայրսիրութեան պաշտ-
պան հանդիսացաւ, այլ սարուկ դարձաւ այս աշ-
խարհի զօրեղներին և կրօսեր եղբայրների դէմ
գաւաճան ու խաբեբայ հանդիսացաւ: Եւ այդ զար-
մանալի չէր այն դէպքից յետ, երբ հռովմէական
հոգևորականութիւնը մի անգամ արդէն անջատեց
ժողովրդից և յենարան դաւա նրանց, որոնց շահե-
րը միանգամայն հակառակ էին ժողովրդի շահերին:

հոգևորականութիւնը ճշմարիտ խօսել անկա-
րող էր, որովհետեւ Երկու Սիցիլեայի տիրապե-
տողները, նոյն իսկ հռովմէական պալատը նրա դէմ
ոտքի կկանգնէին և ժողովուրդը ամենեւին արամա-
ղիւր չէր պաշտպանել հոգևորականութեանը: Սյս
էր պատճառը, որ Բուրբոնեան կառավարութեան
և կաթոլիկ հոգևորականութեան մէջ պահպանուում
էր այն երկուստեք երաշխաւորութիւնը, որի ըն-
թացքում իրար կազդուրելով, համարձակ առաջ
էին վազում ժողովրդի վիճակը աւելի և աւելի
ծանրաբեռնելու գործում:.... Բայց մի բան օտարո-
տի է, թէ ի՞նչպէս կաթոլիկ հոգևորականութիւ-

նը, որ այնպէս խորամանկ և ճարպիկ էր տեսա-
կան մասի ազիտութեամբ հանդերձ՝ հասկացաւ
իր գրութիւնը և ի նկատի չառաւ իր շանտերը
վերջին տարիների վերաբերեալ: Ներկայումս նէա-
պօլումն էլ քահանաների մեծ մասը ազատամիտ է
դարձել. սցոիներն՝ արամաղիւր է դէպի սահմանադ-
րութիւնը, Աւստրիայի և Բուրբոնների մասին
վստ է խօսում և մինչև անգամ յուզող ծառեր է
ասում աղատութեան նախանձախնդիրների և Իտա-
լական մտքի նահատակների պատւին: Բայց ինչպէս
էրևում է, նրանց այսպիսի վարմունքը առանձին
համարմունք չվստատակեց հասարակաց կործիքի
առաջ: Նէպօլում քիչ չէ պատահում, որ այդպի-
սի ազատամիտ քարոզիչներին միայն ծաղրական
ժպիտով են լսում, քարոզիչներ, որոնք տարի
առաջ բուրբոնեան սատիկանութեան գլխաւորներից
գրգւած, երկնային որոս էին հայցում ազատ մտա-
ծողների գլխին, որպէս օրինական կարգերի դիմա-
դրողներ: Շատ կարելի է այդ ժպիտները սակաւ
կլինէին կամ միանգամայն չլինէին, եթէ քահանա-
ները և կաթոլիկ վանականները, չէնք ասում թա-
փանցէին անկեղծ աւետարանական հոգւով, այլ
դոնէ ուղիղ հաշիւ տեսնէին, թէ իրանք ի՞նչ գրու-
թեան մէջ են և մօտ ժամանակում իրանց ի՞նչ է
սպասում: Ուրիշներից աւելի նրանք լաւ գիտէին
մտքերի արամաղրութիւնը նէպօլում և Սիցիլեա-
յում, որովհետեւ նրանց ձեռքումն էր կրթութիւնը
և խոստովանանքը: Նրանք գիտէին և տեսնում էին,
ժողովուրդը ո՞րքան է համբերում, ո՞ր չափով է

ներսրաւած, այն, թէև լուռ, բայց ներքուստ ներսրաւած է: Նրանց յայտնի էր ժողովրդի մասնաւոր կեանքը, իւրաքանչիւրի և բոլորի ընտանեկան և քաղաքացիական յարաբերութիւնները. նրանք բոլորից աւելի շատ կարող էին ըմբռնել թէ՛ որքան ծանր է գոյութիւն ունեցող կարգը նէպօքիտանցիների համար և դեռ որքան երկար կարող է ժողովրդի համբերութիւնը աւել.... Սյս բոլորը գիտենալով, նրանք կարող էին և յամենայն դէպս պարտաւոր էին, մինչև անգամ ինչպէս Բուրբունների բարեկամ, այլ լեղևով խօսել, զործելու այլ ընթացք բռնել: Ոչ թէ զօրեղ մարդոց ցած-շողօքորթող գովասանքներ ասէին, այլ ճշմարիտ մերկացումներ և սպառնալիքներ պիտի կարգային. մինչև անգամ դոնէ այն աեսակէտից, որպէսզի պետական կուսակցութիւնը վերջնական կորստի խելացնորութիւնից փրկեն և բանան դրանց աչքերը, զործերի իսկական դրութիւնը ցոյց տալով: Նրանք պարտաւոր էին մինչև անգամ ժողովրդին ևս թարմ հասկացողութիւններ ներշնչել իր իրաւունքների, հասարակական յարաբերութիւնների, պետութեան մէջ իր նշանակութեան մասին: Սյնուհետև՝ խելացի և հեռուդարար, ժողովրդին առաջնորդել գէպի բարեկարգ քաղաքացիական կեանքի գործունէութիւնը. և ոչ թէ ձառել ժողովրդի անարգ և ստոր լինելու մասին և այսպիսով առաւել ևս նրան դրգռել և հարկադրել, որ ոստիկանական գաւազանի տակից ուղղակի գէպի յեղափոխական կրակը սլանայ....

Ասում ենք, այսպէս պէտք է գործեն կաթօլիկ քարոզիչները և ընդհանրապէս հոգևորականները, մինչև անգամ որպէս Բուրբունեան կուսակցութեան բարեկամներ, եթէ միայն ճիշտ նկատի ունէին նրանք գործերի դրութիւնը երկու Սիցիլիայում ևս: Բայց և այնպէս՝ շատ կարելի է, նրանցից շատերը այդ հաշիւը նկատի ունէին: Կղերականներից աւելի խելացիները վաղուց էին հասկանում, որ բուրբունեան կարգ ու կանոնը անհաստատ հիմքերի վրա է դրւած. սակայն այնքան բնաւորութիւն չունէին, որ իրանց նախատեսածը գործադրել կարողանային: Միևնոյն ժամանակ՝ հռովմէական պալատն էլ շատ էր խառնուած: Մի այդպիսի վճիռ անել — դիմադրել բուրբունեան սանովիտիների անմիտ կամայականութիւններին — այդ նշանակում էր, ոչ միայն մարմնաւոր, այլ իր հոգևոր իշխանութեան անբաւականութիւնը իր դէմ յարուցանել, որ միշտ ստորակարգ կղերից պահանջում էր լիովին հաճոյանալ այն կառավարութիւններին, որոնք լաւ յարաբերութեան մէջ են հռովմէական պալատի հետ: Այսպէս՝ մի կողմից քանի մի նիւթական արտօնութիւններից զրկւելու փոքրոզի երկիւղը, միւս կողմից՝ դատապարտւելու, և շատ կարելի է մինչև անգամ պապից բանադրւելու ոչ սակաւ փոքրոզի երկիւղը յետ էին կասեցնում մինչև անգամ ամենախելացի և բարեխիղճ հոգևորականներին և նէպօքիտանեան հոգևորականութիւնը շարունակում էր ստրուկ լինել անարգար

ոյժին և մասնել ժողովրդին նրան հարստահարող-
ների կամայականութեանը:

Սովաւաթւերը, ամենահամարձակները միայն
արհամարհեցին նիւթական շահերը և իրանց հա-
լածանքների, աքսորի, թափառական կեանքի են-
թարկեցին, որպէսզի հաղորդեն ժողովրդին ճշմար-
տութեան խօսքը, որպէսզի զրեղ հարստահարող-
ներին յաղթահարեն: Դրանց թուում առանձնապէս
աչքի է ընկնում Գավազցին: Միթէ՞ Բուրբոնների
և նրանց համախոհների դէմ արած ցոյցերի համար
Գավազցուն պիտի մեղադրել: Միթէ՞ կարելի է
պնդել, որ նա իր քարոզներում Քրիստոսի վարդա-
պետութիւնից հեռու է, քան սարկոզի կղերը, որ
Բուրբոնների ժամանակ այնքան ստուծիւններն ու
խտուծիւնները փառաբանում և պաշտպանում էր:
Ատում են՝ քրիստոնէութեան խօսքը — խաղաղու-
թեան և սիրոյ խօսք է, ոչ թէ վրէժխնդրութեան
և անէծքի խօսք.... Բայց չէ՞ որ Գավազցին էլ իր
քարոզներով միշտ գէպի սէր ու խաղաղութիւն էր
հրաւիրում: Նա մինչև անգամ առանձին հողատա-
րութեամբ իջեցնում է ժողովրդի բարկութիւնը
Բուրբոնեան հարազատների դէմ: Անհրաժեշտ է
համարում նա զանազանութիւն գնել նրանց և
ամենավատ («ահիճների») մէջ. նա խորհուրդ է աւ-
լիս հասարակական դատի հրաւիրել, քան զուր
անպատել.... Բայց եթէ նա Բուրբոնների դէմ
խիստ էր խօսում, չպէտք է մոռանալ և այն, որ
նա խօսում էր նրանց արտաքսելու առաջին օրերին,
երբ դեռ Փրանչիսկօն զօրք ուներ, երբ դեռ նա

սպառնում էր ամեն օր՝ Նէապօլ վերադառնալ. հե-
տեապէս այս դէպքում Գավազցին ներկայանում է
զօրեղին յանդիմանող. իսկ յանդիմանութեան այս-
պիսի օրինակներ քրիստոնէութեանը կտակեցին
դեռ Իսրայելի մարգարէները: Նա եթէ առանց
յարգանքի էր խօսում պապի և կարդինալների մա-
սին, չէ՞ որ դրան արժանի էին, և նրանց հետ այդ
դէպքում մեղմ վարել անտեղի կլինէր. Ինքը՝
Քրիստոսը վաճառողներին և գնողներին երուսա-
ղէմի տաճարից խարազանով արտաքսեց:

Կային և ուրիշները, որ Գավազցու վրա աւե-
լի չափաւոր կերպով են յարձակում և դիտաւո-
րապէս նրա համար, որ իրան թոյլ էր տալիս իր
քահանայական կոչումը և եկեղեցու ամբիոնը նսե-
մացնել, խօսելով այնպիսի բաների մասին, որ կրօ-
նին չէր վերաբերում: Դրան վերաբերեալ կարելի է
դարձեալ պատասխանել, նրա քարոզները մե-
ղադրողների ուսմունքների հետ համեմատելով:
Իժւար է երեւակայել մի որևէ աւելի մեռած, ա-
ւելի վերացական բան, քան կաթոլիկ քահանանե-
րի սովորական քարոզները:

Ճիշտ է, նրանք վսեմ և սուրբ բաների մա-
սին խօսում են, օրինակ — կաթոլիկ եկեղեցու դա-
ւանանքի մասին, Սուրբ Երրորդութեան խորհրդի,
Սուրբ Վուսի անսերմ սկզբնաւորութեան մասին,
Հոովմէական եկեղեցու սրբութեան մասին ընդ-
դէմ բողոքական հերձաւածների, սրբերի մեղաւորնե-
րին պաշտպանելու մասին և այլն, բայց այդ բոլո-
րը ունկնդիրների համար մեծ մասամբ զուր է կոր

չում, որովհետեւ նրանց համար ոչինչ գործնական չկայ և դէպի բարի միտք, դէպի բարի զգացմունք նրանց չէ զրգռում: Կաթուղի քարոզիչները աւելի յաճախ խօսում են բարոյականութեան մասին, որից կարծւում է թէ՛ նրանք ևս իսկական կեանքը պիտի շօշափեն, պէտք է խօսեն «աշխարհական» իրերի մասին, որպէսզի դոնէ իրանց ունկնդիրների ուշադրութեան վրա ազդեն. սակայն նրանք այլ ուղղութիւն են բռնում: Իւրաքանչիւր առարկայ վերջնում են կեանքից անջատ. խօսում են, ինչպէս կխօսէին հազար տարի առաջ, առանց կեանքի նոր պահանջներին ուշադրութիւն դարձնելու: Օրինակ — ձառելով հազուստի կամ ուտելիքի մասին, որպէս վերջնական փաստեր մէջ են բերում սուրբ Աւգուստինոսի կամ Թովմաս Կեմպացու կարծիքները և այնուհետեւ կրկնում են սովորական, ամենին ձանձրացրած և ամենից յիսուն անգամ լուծ կարծիքներ համեստութեան, չափաւորութեան մասին և այլն: Ընդհանրապէս՝ պահք, աղօթք, խոստովանահօր առաջ դարձ գալ, խօնարհութիւն, համբերութիւն, ահա՛ կաթուղի քարոզիչների սիրած նիւթերը: Երբեմն աւելի հնարովի նիւթեր են վերջնում. օրինակ — երբ ցանկալի է քարոզչին ողջախոհութեան մասին խօսել և այնուհետեւ սկըսում է սայացուցանել, ի՛նչպէս այդ ողջախոհութիւնը հաւասարացնում է մարդիկներին հրեշտակների հետ, ի՛նչպէս դա առաջնորդում է մարդոց, առանց քաւարանի անգամ դէպի Աստուած, ի՛նչպէս ողջախոհութեան առաջ ազատանում են բոլոր առա-

քինութիւնները և իբրև քարոզիչ հետեանք մտում է, որ անէճք թափեն ամուսնական յարաբերութիւնների մասին, որոնք և անւանում են «սատանայական դայթակղութիւններ» («կենդանական ձգտումներ») («մեր մարմնի աղտոտ և ստոր մեղքը») և այլն: Հարց — այսպիսի քարոզիչներից կարելի՞ է ունկնդիրների համար բարոյական օգուտ սպասել, որոնց քարոզները ոչ մի գործնական միտք չեն պարունակում և եթէ ձանձրալի ու անարգ չեն, այն էլ նրա համար է, որ իրանց մէջ արտաքոյ կարգի յիմարութիւններ են պարունակում:

Մի բան, որ քարոզիչները կենսական յարաբերութիւնների մէջ ինկատի ունեն, այդ՝ իրանց սեպհական շահերն են: Հազիւ է քարոզ պատահում, որ անուղղակի կամ ուղղակի դէպի նւիրաբերութիւն մատնացոյց չանէր յօգուտ եկեղեցու, այսինքն՝ յօգուտ նրա պաշտօնեաների: Ժիշա է, նրանք երբեմն փողի մասին ուղղակի չեն խօսում, բայց օրինակի համար՝ խօսում են մի քանի պատարազների փրկարար զօրութեան մասին, որոնք այսինչ նպատակով են արւած, կամ խօսում են խոստովանութեան և ինգուլգենցիայի (մեղաց թողութեան սոմնակներ) անհրաժեշտութեան մասին... Իսկ ա՛ճուրդը կատարւում է կուլիանների ետեւում... Այս բոլորի հետ միասին՝ մի շարք քարոզներ էին սոււում վերջին տարիները, որոնցով միմիայն զրգռում էին քրիստոնեաներին նւիրաբերութիւն անել «Սուրբ Պետրոսի լումայ» կոչւած մայր եկեղեցու օգտին: Այս դէպքում ի հարկէ, բայցատրւում էր

նւիրարերութեան մեծ տրժանիքը, որպէս քրիստոնէական առաքինութիւններից մէկը. խօսուում էր Սուրբ Նոր (Պետրոս առաքեալ) վշտերի մասին, երկնային պատիժ էին հրաւիրում նրա թշնամիների գլխին և այլն...

Այս բոլորը, կաթոլիկ աստուածաբանների կարծիքով չէր նսեմացնում եկեղեցու ամբիօնը, իսկ Գաղացու քարոզները նսեմացնում էին...

Բայց ինչո՞ւ. նրա համար արդե՞ք, որ Գաղացին հռովմէական պաշտօնի հանգամանքների համեմատ չէր խօսում. թէ՞ նրա համար, որ ժողովրդի հետ հասարակ լեզուով էր խօսում և ժողովրդին անհասկանալի լատինական բնաբաններ չէր դնում: Կարծեմ, թէ այս թէ այն, մեր քարոզչին յանգիմանոյների օգտին չեն խօսում...

Բարեբաղդաբար կարելի է յուսար, որ կաթոլիկ իմաստունների հայեացքները առողջ համոզմունքների վրա երկար չեն յաղթանակի: Իսալիայում նրա քաղաքական վերածնութեան հետ զարգանում է և Քրիստոսի վարդապետութեան և հոգու մասին իսկական հասկացողութիւն. արդէն շատերը հասկանում են, որ այդ վարդապետութեան ներկայացուցիչներ չպէտք է որոնել հռովմէական եպիսկոպոսների կազմակերպութեան, արքաների և նրանց բոլոր ստորաբաժանումների մէջ և արդէն նրանք հոգեորականների հետ ամեն տեսակ յարաբերութիւններ կտրում են: Հռովմում իսալական ազգայնութեան թագաւորելովը, կաթոլիկական խաւարամտութեան վերջին արգելքը ևս կրննի և

հոգեորականութիւնը իր Ֆէօպալական, անարդար արածնութիւնները կորցնելով և տեսնելով, որ անկարելի կլինի այսուհետև ժողովրդին խաբել, երևի թուով կպակասի. բայց միևնոյն ժամանակ բարոյապէս կբարձրանայ, քաղաքացիական օգտաւէտ գործունէութեան ճանապարհը կբռնի, ժողովրդի մէջ առողջ և իսկապէս օգտակար մտքեր տարածելու:

Վ Ե Ր Զ

[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]



ԹԻՖԼԻՍՈՒՄ «ԿԵՆԴՐՈՆԱԿԱՆ» ԵՒ «ԿՈՒՏՏԵՆ-
ԲԵՐԳ» ԳՐԱՎԱՃԱՌԱՆՈՑՆԵՐՈՒՄ ԾԱԽԻՈՒՄ
ԵՆ ԹԱՐԳՄԱՆՁԻ ՀԵՏԵԻԵԱԼ ԳՐՔԵՐԸ

1. Այթմազանց Միքէլը 8 Կ.
2. Դրօշակ-Լիֆօրի 8 »
3. Մխիթնար Հայր Դավիան Վէյսաէրի
կեանքը 10 »
4. Տաճիկ փաշա 15 »

ԳԻՆՆ Է 25 ԿՈՊ.

« Ազգային գրադարան



NL0156057

2750